

Բաժանորդագիրն կԱՆԻԻԿ՝ Թուրքիոյ համար տարեկան 50 դրշ, Ռուսիոյ համար 50 րուպ. չի : ուրիշ երկիրներու համար 25 ֆր.

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին :

Գաւառներէն դրամի տեղ Օսմանեան նաւակադրոշմ կ'ընդունուի :

ԵՄԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար ղիմել

Առ Տնօրէն-Հրատարակիչ

ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Փոլիս, Պանդե-Գալտ, Թաշ Խան, Թիւ 50

ՄԱՂԻԿ

ԼՐԱԳԻՐ

درعليه ده بفتح قیوسنده طاش خاندن

•• نومروده «زاغیک» غزته سی مدیری

بالاقاشیان حوونان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghik»

Rue Bahtché-Kapou, Tach Han, 50

CONSTANTINOPLE

40 Փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 Փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 44

ՇԱԲԱԹ

3 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1892

ՃԱԲԱԹԱԿԱՆ ՔՐՕՆԻԿ

Ինչպէս ամէն բանի, նոյնպէս գրական-նութեան մէջ անկեղծութիւնը գրող ան-ձին բարոյականութեանը վրայ գոհա-ցուցիչ չափով գաղափար մը կուտայ :

Արեւելի Տ. Ա. յարգւոյ յօդուածա-գիրը երբ կը քննադատէ Պ. Ա. Չօպան-եանի մէկ քննադատականը, յերևան բե-րելով այդ գրութեան բուն չարժանիքն, որ իրեն այնչափ պատուաբեր լինել չեմք կարծեր, բայց մենք իբր անկեղծ են-թադրելով —ինչ որ կը սիրեմք սպասել իրմէ— կը պատասխանեմք այդ քննա-դատականին :

Մեր մէջ քննադատութիւն չկայ. ան-կարող մարդիկ հրապարակ կ'ենեն, որք կրնային կօշկակար կամ այլ արուեստով մը աւելի օգտակար ըլլալ. մեծ մարմաջ մը դպրոցականաց՝ թերթերու մէջ գրե-լու, եւն. ահա այս էր իւր գրութեան միտք բանին :

Մենք եւս մեր կարգին համակերպե-լով կատարելագոյն իւր կարծեաց, իրա-ւունք կուտամք իրեն :

Ոչ իրեն, այլ իւր կարծեացը :

Ինք եւ իւր կարծիք մեծագոյն կը տար-բերին իրարմէ, եթէ կը ներուրի մեզ այս-պէս սահմանել զինք :

Աշակերտն հազիւ միջոց կը գտնէ իւր գտնաբեր լաւ պատրաստելու վարժարա-նին մէջ եւ գուցէ քիչ մ'ալ ժամանակ ու-նենայ իւր վարդապետն ստատարող երկեր, մեծ հեղինակներ վերծանել փոքր ինչ — խօսքս խղճահար աշակերտին համար է — եւ ոչ երբեք ձգտիլ թերթերու մէջ գրել, համբաւ մը չի նշու փառքով սոնքանալ. սակայն Պ. Չօպանեան, հակառակ իւր շատ յանդուգն վճիռներուն, գիտեմք որ թերթերու մէջ անթիւ նորավիպեր, յօդ-ուածներ կը թարգմանէր, կը գրէր, ե-թէ չեմ սխալիր, Արեւելի թերթօններն ալ կը թարգմանէր գաղղիներէն, տակա-ւին չաւարած վարժարանական ընթաց-քը : Իսկ դասերուն չգիտեմ թէ իւր օր-

ուան ժամերն ո՞րչափ էին եւ ի՞նչպէս կը կարգադրէր : Արդէն մեր վարժարանաց, որը որ լինի, աւանդուած դասերուն ալ նուազ կարեւորութիւն տանք, կար-ծեմ անոնցմէ դուրս եկող եւ գրագիր կամ մատենագիր դառնալ ուզող անձը սովո-րական մահկանացուաց հետ հեշտիւ բաղ-դատութեան կը դուրսի :

Գրագէտ մը, եթէ չէ համալսարա-նական մը, պէտք է գէթ լաւ կատա-րած լինի երկրորդական վարժարանի մը ընթացքը :

Նորեկ գրագիրի մը պարտքն է կը կարծեմք, փոխանակ աւելի դիտողու-թիւններ ընելու, խոյս տալ որչափ կա-րելի է տեղի տալ այդ դիտողութեանց :

Արդէն այն ժամանակը քննադատու-թիւն մը կը լուրի, երբ զայն ընողին ձեռնհասութիւնը ճանչցուած է :

Եթէ Պ. Չօպանեանի վճիռներու յարգ-մ'ընծայենք, դժբաղդարար զինք շատ հեռի կը գտնեմք իւր յախուռն կերպով արձակած վճիռներէն :

Ինք արձակ թէ՛ ոտանաւոր, նուազ խղճով մը կը քննադատէ, բայց իբր օրի-նակ, սունուր իւր վերջին բանաստեղ-ծութենէն քանի մը տողեր : Երկուքին մէջ այս է նիւթը, չափը՝ եռանդամ 4-3, հետեւաբար շեշտ պէտք է մէջը, ո-րու դժբաղդաբար քիչ տեղեր կը պա-տահինք : «Երբոր կիկեկ յուսահատած» եւ ուր գտած է «Երբոր», «կիկեկ»ը. պաղ ընկած է :

«Մեր արցունքին մը թութեան վրայ միշտ Նրկինք Մը կը գտնենք անուշ, ժպտուն, լու-սալիւր :

Նրբ տողն մը ով կ'սկսի, կարելի է գրողին ճաշակին վրայ գաղափար մը ստանալ. ուր են գտնեքի, ժպտունի ք երը, որոնք կարծեմ կը փնտռուին :

Անդամի մը վերջին վանկը ք ով կը վերջացնէ եւ ք երբեմն այդ անդամին չափը կը լրացնէ, իսկ երբեմն ալ եկող անդամին կուտայ, ահա երկուքէն ալ օրինակ :

«Մեր աչքերը կը դարձնենք բնու-թեան»

«Չի գոհացներ մեր բաղձանքները թը-զուկ»

Միթէ աշխարհաբարեանի մը ա-մէն այլանդակութեանց կը ներէ տա-ղաչափութիւնը : Նս կը հաւատամ թէ Պ. Չօպանեան երաժշտութենէ շատ քիչ հասկցող մ'է : կարծէք իւր ականջներն ջերմ բողոք բարձած են բարեձայ-նութեան դէմ :

—Չը գիտնալով որը ընտրել երկու-քին :

—Չէ՛, արշալոյս մը համբուրել, ևայլն գրկել աստղիկ մը պլլլլուն :

—Անհոգ բնութիւնը թէ կինը մը՝ տախար :

Բաղձանքներ թըզուկ, պաղ է ան-տարակոյս : Իսկ, — Մարդուն կեսնքը դեգերի միշտ խարխափ— փոխանակ առ խարխափ ըսելու եւ հայերէն ըլլալու : Ինձ կը թուի թէ մեր աշխարհաբար օրէնք մը գծած չէ մեզ՝ հայ լեզուի ոգւոյն դէմ մեղանշելու, եւ մեր լեզուն՝ զինք քան-դելու յանդգնող ձեռաց երկայնակեցու-թեան մաղթանքը չընեն կարծեմ :

Նրկայն կը լինի քննադատութիւնս, եթէ այդ ոտանաւորի իմաստին, ոգ-ւոյն, դիտաւորութեանը վրայ եւս ու-զեմ ճառել եւ վիրաւորուած տեսնել մեր երիտասարդ գրագէտն, որու ունեցած տաղանդի մասին կասկած չունիմք, եւ հաւանականութենէ զուրկ չէ թէ գրաւէ օր մը գրագիրաց շարքին մէջ իւր տա-ղանդին արժանի տեղ մը :

ԱՐՇԱԽԻՐ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵՐԲ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Գիւն 5 դրուշ

Կը ծախուի ԵՄԱՂԻԿԻ խմբագրատունը :

Շ Ա Ր

Հ Ա Յ Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Յ

Թ.

ՅԱԿՈՎԻ ՇԱՀԱՆ-ՋՐԱԿՏԵԱՆ

(Շար . Գախորդ քիւնք)

13. Երեքտասներորդ գրական գործն Շահան-Ջրպետին, նոյն ժամանակի օրուան խնդրոց մէջ մեծ բովանդակ և վիճակ յարուցած լինելով, կարծէ որ քիչ մը ընդարձակօրէն ծանօթացնենք:

Իբրև հայ լեզուի ուսուցիչը Փարիզու լեզուաբանական արքունի շամալարարանին, մեծանուն Եղեսային՝ դպրոցին կանոնական ծրագրին համաձայն՝ Քերականութիւն մը յօրինած էր, ինչպէս Յրանսահայ բառարան մը, որոցմով աշակերտացը կը դասաւանդէր:

1823 ին հրատարակուեցաւ այդ 818 երեսներէ կազմուած ստուար Քերականութիւնն, հետեւեալ կերպիւ.

«ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՍՐԱՄԵԱՆ ԼԵԶՈՒԻ, յորում բացատրին սկզբունք եւ կանոնք Արամեան լեզուին ըստ հեղինակութեան ընտրեալագոյն քերթողաց, ուղղախօս մատենագրաց և սեպհական սովորութեանց հայկական բարբառոյ: Յօրինեալ ի պէտս ուսման աշակերտաց արքայական և մասնաւոր դպրոցի արեւելեան լեզուաց թագաւորական Գրատան: Ի Յակովբայ Շահան-Ջրպետեան, յեղեսայացոյ. յարքայական վարժապետէ հայկական լեզուի այնր Գպարտան, և ի ընկերութեանց շամալարանին հնագիտաց Գաղղոյ, Գամարձակին Սէլարհագրաց Փարիզոյ, և Հայկական ճեմարանին Սրբոյն Ղազարու Վնէժ քաղաքի: Ի Փարիզ, ի տպարանի պարոն Եւրաթայ. ի փողոցն Քատրան, ի թուահամարն տանց 16. յամի տեառն 1823»:

Հ. Գարեգին Ջարահանէլեան սոյն Քերականութեան նկատմամբ ունեցած կարծիքը հետեւեալ ձևով կ'ամփոփէ.

«Համառօտիւ մը կ'ուզենք յիշատակել քանի մը հայկական Քերականութիւններ, որոց գովելի նպատակն եղած է մեր լեզուն օտարաց ծանօթացնել ու սիրելի ընել:

«Ասոնց մէջ առաջին և գլխաւոր կըրնանք սեպել Ղեհան Յ. Ջրպետ, որ յարքունական համալսարանին Փարիզու երկար տարիներ հայկական լեզուի ուսուցչութեան պաշտօնը վարած ատեն (1814), գաղղիական լեզուով ընդարձակ Քերականութիւն մը հրատարակած է հայ լեզուի, ջանալով՝ իրեն նախընթաց քերականաց գրուածոց մէջ ամփոփուած հարկաւոր կանոններն համառօտել, ա-

ւելի պարզ ոճով, ու եւրոպական գաղափարաց ու տեսութեանց համաձայն երկասիրութիւն մը արտագրելով: Ինք եղաւ առաջին որ մեր ազգային լեզուին վրայ սէր ու համարում մը արթնցուց ի Գաղղիա, և իւր ջանիցն արդիւնք կըրնանք սեպել մեր օրերուն բանասիրական ու պատմական հետազոտութիւնքը, որովք յաջողութեամբ կ'ըրազի այդ հետաքննն ու գործունեայ ազգը: Ոմանք Ջրպետի հակառակեցան, ու տպագրած Քերականութեան սխալներուն հրատարակութեամբ ուղեցին զնասել իւր համբաւոյն: Բայց հեղինակը տպագրութեամբ պատասխանեց, անոնց թիւր կամ իրաւացի քննադատութեանը, արդարացնելով ինքզինքը և բռնած ոճը, որուն նըպատակն ուրիշ բան չէր, բայց թէ հայկական լեզուն Եւրոպացի գիտնոց սիրելի և դիւրուսոյց ընել: Հեղինակն, ինչպէս ըսինք, իւր վախճանին կրցաւ հասնիլ»:

Արեւելագէտ և հայերէնագէտ Գառնիէ՝ Ջրպետի Քերականութիւնն մեծ սանմարտէի հատոր մը կը նկատէ ի վերիպակօք:

Ուրիշ հեղինակ մ'ալ Հայերէն Քերականութեանց վրայ ճառելով, ի մէջ այլ ծանօթութեանց, կը յարէ.

«Յովակիմ Դեհօտեր էր առաջինն, որ զնոր լեզուն Հայոց քերականաւոր բացատրեաց յիւրում Թէսաւրոսի (գանձարանի) հին և նոր լեզուին Հայոց. յԱմբաստ. 1711. Գրքոյն նորա Նկատողութիւն քաղաքական լեզուին Հայոց, ճառէ համառօտակի և եթ զբարբառոյն, որ ի Հայարնակս խօսի, և ունի էջս 21»:

«Երկրորդն էր Մխիթար՝ որ 1726 ին գրեաց զընդարձակ քերականութիւն իւր, որ ոչ է տպագրեալ սակաւին, այլ քաղուած ինչ ի նմանէ տպագրեալ յամին 1727 հանդերձ տաճկերէն բացատրութեամբ՝ ի շարս մեծամեծ գրականական հազուագիւտիցն է դասելի: Համեմ. Բազմալիկ 1843 Տ. 109. Գրեթէ զկնի 100 ամաց երեւցաւ «Քերականութիւն լեզուին Հայոց» ի Ջրպետէ ի Փարիզ», և ըն:

Կոստանդնուպոլսեցի Հայր Յովհաննէս Չոհրապետի գիտնական վարդապետն ալ ի Փարիզ գտնուելով Ջրպետեան Քերականութեան հրատարակուած ատեն, տեղոյն Ասիական ընկերութեան թերթին միջոցաւ կը հրատարակէ իւր դիտողութիւններն յետագայ ոճով.

«Ձեռ գիտեր թէ այս կարգէ դուրս վարդապետը, որ այդչափ համեստ չափաւորութեամբ խորհուրդներ կուտայ, որ դպրոցի մէջ իւր ուսումն ըրած է, բայց որ և իցէ կերպով՝ իւր ուսուցչին պատիւ չի բերէր. ուրիշներու դաս տալէն աւելի՝ լաւագոյն էր որ ինք միւս

անգամ հոն դառնար: Վասն զի այնպիսի սխալներ կ'ընէ, յորոց յետին աշակերտ մ'ալ կը գգուչանայ. երես մը չես գտներ, ուր խորթ ոճից և խժաբանութեանց չհանդիպիս»:

1850ին Յ. Մ. Հիսարեանի հրատարակած Բանասեր գրական հանդիսէն կը տեղեկանաւք թէ Ասիական օրագիրը մերժած է այն ժամանակ հրատարակել Չոհրապ վարդապետին դէմ Ջրպետին պատասխանը: Այս ըլլալով է պատճառը որ Ջրպետ՝ 40 երեսներէ բաղկացեալ առանձին տետրակով մը հրատարակեց իւր պատասխանագիրը, «Ասիական ընկ. օրագրի 12րդ քերթին մէջ Ջրպետեանի Քերականութեան նկատմամբ հրատարակուած քննադատութեան մը հերքումն, Փարիզ 1823» մակագրով: Այս տետրակին պատասխանած է Չոհրապ վարդապետ դարձեալ նոյն օրագրոյն միջոցաւ:

Բազմալիկ զայս յիշելով, կը յայտարարէ թէ՝

«Չոհրապ՝ Ասիական ընկերութեան օրագրին մէջ երկար պատասխանով մը ցըցուց՝ այլ և այլ օրինակներ մէջ բերելով, թէ ինչպէս այդ գրուածին հեղինակը բազմաթիւ վրիպակներ գործած է, յայտնելով իւր անբաւականութիւնը ի քերականական ուսման:

«Այն ատեն Ջրպետեան՝ ձախողալ խորհրդով մը ներկայացուց իւր գրուածը Յ. Գլափրոթի, նամակ մ'ալ ուղղելով առ նա (19 օգոստոս 1823) և ցաւայտնելով զինք համամիտ տեսնելուն իւր հակառակորդաց հետ: Գլափրոթ առանց քաջուելու փութաց պատասխանել, թէ մանաւանդ քաղաւոր կը սեպէ ինքզինքը այդպիսի իմաստուն անձանց հետ համամիտ գտնուելուն, որով առիթ տրուած է տգիտութեան քօղը պատռել մէկդի ձգել և անհիմն յաւակնութիւնները իրենց բուն արժէից վերածել: Վրայ բերաւ թէ՝ Ջրպետեանի նախկին աշխատասիրութիւններն ալ մեծ վստահութիւն մը ազդած չէին իւր հմտութեան և գիտութեան նկատմամբ:

«Այս նամակն տպագրելու առ Գլափրոթ և այնպէս զրկեց առ Ջրպետ, որպէս զի մամլոյ յանձնելու նեղութիւն չը կրէս ըսելով»:

* *

Շահան-Ջրպետ բնաւ չյուսահատելով իրեն դէմ գրուած բռնաքննադատութիւններէն, 1824ին վերջին անգամ հրատարակութիւն մ'ալ ըրաւ ի Փարիզ՝ «Քերականութիւն Դիոնեսիոսի Թրակացոյ՝ հանեալ ի թագաւորական գրատանէ Փարիզոյ, և ի ըյս ընծայեալ ի Յոյն, ի Հայ և ի Գաղղիացի լեզուս, հանդերձ ծանօթութեամբք ի Յակովբայ Շահան-Ջրպետեան Եղեսայացոյ ի դաստաւոր վարժապետէ հայկական բարբառոյ

յարքայական դպրոցի արևելեան լեզուաց թագաւորական գրատան, և ինչ :

Զրպետի մասին թեր ու գէ՛մ գըր- ուած ինչ ինչ կարծիքներն ու քննադա- տական մէկ քանի տողիկներն յիշելով հանդերձ, կը յաւելումք նաև թէ նորա գրական գործունէութիւնը միշտ գնա- հատուելով, ոչ միայն երկար տարիներ վարժապետ մնաց Հայկական լեզուի յար- քայական դպրոցի արևելեան լեզուաց թագաւորական գրատան փարիզու, այլ և անդամ կարգուեցաւ՝ Դաղդիոյ Հնա- գիտաց Համալսարանի ընկերութեան : Բաց ասկից, անդամ էր նոյնպէս, Փա- րիզու Աշխարհագրաց Դամարձակին, ինչ- պէս նաև՝ անդամ Վրնէժի կամ Վե- նետոյ Սրբոյն Ղազարու Հայկական ձե- մարանին :

Ապաքէն, Զրպետ՝ իբրեւ գրական մարդ, աւելի Եւրոպացւոց ծանօթ է, քան թէ մեր Ազգին :

Նգեսացին՝ օտար լեզուաց մէջ ունե- ցած հմտութեամբն և բազմակողմանի ծա- նօթութեամբը, Հայ մատենագրութեան ճաշակն՝ Եւրոպացւոց մէջ ներմուծելու աշխատողաց մէջ առաջին տեղը բռնած է : Այս ճիւղին մէջ՝ իրմէ ետքը կուգան թէև աւելի օժտեալ և կատարելագործ- եալ՝ յաւերժայիշատակ Շահնազարեան Կարապետ վարդապետ, անմահ Մկրտիչ Էմին և անմոռաց Քերովբէ Պատկան- եան, որ ամէն զոհողութիւն ըրին ազ- գային մատենագրութիւնը Եւրոպացւոց ծանօթացնելու, և օտարազգեաց ունի ու համակրութիւնը մեր ազգային լեզուին և գրականութեան վրայ հրաւիրելու :

Ներսէս Աշտարակեցին՝ Տփլիսու Ներսիսեան Դպրանոցը կառոյց 1824 նո- յեմբեր 21 ին, յորում ուսումը 1824 ին սկսաւ :

Այս թուականին՝ հիմնադիր Սրբազա- նը ամէն ջանք ի գործ կը դնէ որ տե- ղական ոյժերով մեծ զարկ տայ նորա- քաց դպրանոցին : ուստի նոյն ժամանա- կի ձեռնահաս համարուած ուսուցիչներն հեռաւոր տեղերէն յատկապէս հրաւիրեց ի Տփլիս : գործիւնակ՝ Մոսկուայէն բե- րել տուաւ Ալամբարեան Տ. Յարութիւն քահանայն, Ղարաբաղէն՝ Պողոս վարդա- պետն, Դաւրէժէն՝ Բեդլեհէմ անուն Հայը, իսկ Փարիզէն Շահան-Զրպետեան Յակովբը, ինչպէս որ գրած էր Պատկան- եանցի Արարատը, Ա. տարի, համար 14. դեկտ. 9. 1850/ին :

Այս մասին Հիսարեան էՓ. կ'ըսէ .

« Զրպետին Փարիզէն հեռանալուն պատճառ կը դնեն, իւր հրատարակած Հայերէն լեզուի Թանձր Քերականութիւ- նը Զօհրապ վարդապետը սաստիկ պար- սաւելով Ասիական օրագրին մէջ, Զրպետ ուզեց նոյն օրագրին միջոցաւ ինքզինքը

պաշտպանել, որն որ հրատարակիչք մեր- ժեցին : Աս բանիս վրայ նեղացած, և Ներսիսեան վարժարանին շինութեանը համար հրաւիրուած՝ գնաց Զրպետ ի Թիֆլիս : »

Այսպէս, Շահան-Զրպետ՝ իւր գոր- ծունէութեան ասպարէզը Թիֆլիս փո- խադրեց, Ներսէս կաթողիկոսին հետ ե- րեք տարուոյ համար պայմանագրուելով :

Տփլիսու Ներսիսեան ուսումնարանին սկզբնական վիճակն՝ հետեւեալ կերպիւ ներկայացուցած է 1858 ին՝ մեծանուն Ստեփաննոս Նազարեանց .

« 1823 թուականին դպրոցը բացվե- լով և Մոսկուայից հրաւիրված Յարութիւն Ալամբարեանց քահանայի գործակցու- թեամբ փոխվելով Հայոց զաւակների դաստիարակութեան եղանակը, Թիֆլիզի մէջ Պարոն Ապովեանը և նորա աշակեր- տակիցք տեղափոխվեցանք նորաչէն ու- սումնարանի մէջ, ուր բաց ի մի կտոր հայերէնից կարելի էր ուսանել փոքր մի շատէ Ռուսերէն, Պարսկերէն, վերջում և Յրանսիարէն, երբ որ Յակոբ Շահան- եան Զրպետը հոգաբարձութեամբ Ներ- սէս վիճակաւոր Արքեպիսկոպոսի բերել էր տրված Փարիզից : Ապովեանը ուսանե- լով այս տեղ մինչև 1828 թ. և լինելով չափահաս աշակերտներից մինը, գուցէ և աւելի մոտիկօր իւր ընկերների մէջ, նշանաւոր էր մանաւանդ թէ իւր շատ զօրաւոր յիշողութեամբ : Ապովեանը մի մեծ ուսումնի դուրս չտարաւ Ներսիսեան ուսումնարանից (ինչպէս ոչ ոք մեզանից), և անկարելի էր այդ բանը այն վայր ի վերոյ, չքաւոր ուսումնատուութեան մէջ, բայց պիտոյ է ասել արդարու- թեամբ, որ մի քանի կենդանի սերմեր, մի ազնիւ ձգտողութիւն դէպ ի ուսումնի յառաջացան այդ ուսումնարանից մի քա- նի մասնաւորների մէջ : Եւ Ապովեանը հրաժարվելով Թիֆլիզից դէպ ի Էջմիա- ծին, տարաւ իւր սրտի մէջ մի վառ ու- սումնասիրութեան կրակ : » (1)

Ռուստկան կառավարութիւնը 1836ին Պալատեքիս կամ Պոլոթեքիս(2) անուամբ

(1) Աշտարակեցին՝ սոյն ուսումնարա- նը աւելի փայլեցուց, երբ ընդունեց Զէր- քէզահայ և Աւտիաչայ բազմաթիւ մա- նուկներ, և յանձնելով վեհագի Պարոն Շանջեանցի խնամատարութեան ու տես- չութեան :

Այդ մանուկներն՝ որ ի սկզբան Հա- յերէն տեղամ չէին հասկնար . շնորհիւ Շաչեանցի մասնաւոր աշխատութեանց՝ ուսմունք առին և քահանայացան, և ի- բեց երկրին մէջ ուսուցիչ դարձան :

(2) Պալատեքիոյ բուն ծագման ման- րամանութիւնը և հաստատութեան պա- րագայք պիտի երեւին ՍԱԼԱՆԹԻՆԱՆ ՄԻԲԱՅԵԼ ԱՐԲԵՊԵՊԿՈՍԻ կենսագրու- թեան մէջ :

օրէնք մը տուած է Ռուսահայոց, « յա- ղաքս կառավարութեան գործոց լուսա-ւորչական Հայոց Եկեղեցւոյ ի Ռուսաս- տան, » և որոյ ուսուցիչն բնագիրը հան- դերձ հայ թարգմանութեամբ նոյն թը-ւականին ապագրուած է ի Ս. Էջմիածին : 1866էն ի վեր հետաքրքրուած և հետա- մուտ եղած եմք տեղեկանալու սոյն կա- նոնագրոյ խմբագրութեան յարակից պարագայներուն, վասն զի տեսած էինք որ անոր հեղինակներն կամ խմբագիր- ներն ի՛նչ ի՛նչ կարևոր և էական մա- սանց մէջ չհասկնալով Հայ եկեղեցւոյ ոգին, յաւակնութիւն ունեցած են մին- չև իսկ մեր եկեղեցին Լուսաւորչական Հայ Եկեղեցի յորջորջելու, փոխանակ իւր բուն կոչմամբն՝ « Հայոց Առաքելական Եկեղեցի » անուանելու զայն :

Ռուսաց Տէրութիւնն՝ Պալատեքիսի հաստատութեան պաշտօնապէս ձեռնար- կելով 1830 ին, Երևանու նահանգապետ Ֆէլդ Մարէշալ Կրաֆ Փասքէիչ՝ հետեւ- եալ չորս անձերէն բաղկացեալ Յանձնա- ժողով մը կը կազմէ .

1. Տփլիսեցի հայազգի ժեներալ Մա- յօր Բեհայուգօֆ .

2. Հռովմէականութենէ վերադարձած Սերովբէ Արքեպիսկոպոս . (1)

Պալատեքիոյ Կովկասիան բարրառով թարգմանութեան նախագիրն ունի հը- նախոյժն Կեսարիոյ Առաջնորդ Դեր . Տ. Տրդատ վարդապետ Պալեան :

(1) Սոյն Սերովբէ Արքեպիսկոպոսն, որ պաշտօնագրին մէջ վարդապետ յիշ- ուած է, ընկի Կարնեցի էր, և իբրեւ Արքեպիսկոպոս Աստրախանայ վիճակին, ունէր Աննայի առաջին աստիճանը : Սա՛ ներկայ գտնուած է 1831 նոյեմբ. 8. յա-ւուր Հրեշտակապետաց, Էջմիածին՝ Կար- րեցի Յովհաննէս Բ. կաթողիկոսին օժ- ման հանդիսին : Իրեն նկատմամբ՝ Պատ- րիարք-Կաթողիկոս ամենայն Հայոց Ներ- սէս՝ հետեւեալը գրած է ի 24 Յուլիսի 1856 ամի, Համար 255 մի պաշտօնական դիտողագրի մէջ՝ ուղղեալ առ Փոխար- քայն Կովկասու, ի պատասխանի նորա 1856 Յուլիս 16 թուական պաշտօնագը- րոյն .

« Աստրախանայ Արքեպիսկոպոսն Սե- րովբէ եղև անդ Առաջնորդ զամս 17. յընթացս այսր ժամանակի զառաքեաց Էջմիածին և ո՛չ զմի կօպէկ, բայց և այնպէս պակասութիւն դրամոց ըստ հաշ-ւոյն՝ գումարեցաւ ի վերայ նորա 120 հազար ռուբլի արծաթ, յորոց 30 հա- զարն միայն երևեցաւ ի գանձարանին, և զայս ընտանիք նորա՝ Հռովմէական Կա- թողիկ՝ հետամուտ լինին իւրացուցանել . մնացեալ 90 հազար ռուբլիք թէ՛ ո՛ւր ծախեցան ո՛չ երևի, և ընդէ՛ր պարտի այս մնալ առանց մտադրութեան՝ ես ան- գիտանամ : »

Սերովբէ Արքեպիսկոպոս՝ 60 հազար ռուբլիէն աւելի պատրաստ գումար մը և Յինոպալն անունով սեպհական դիւղ մը թողած էր Ախալցխայի մօտերը, զոր Գէորգ Դ. Կաթողիկոսն՝ օրինաւոր մի- ջոցներով Ս. Էջմիածնի սեպհականեց :

3. Հռովմէական Հայ՝ բրոֆէսոր Յակովբ Եահան-Ջրպետեան, և

4. Յունազգի Կօլլէժսկի Աստէսոր Օզկինի:

Եւ, 8 Յունվար, 1830 և 3 համարաւ առ սոյն Յանձնաժողովն ուղղած հրահանգին մէջ՝ կ'ըսէ:

« Կարծելով՝ զի այսչափ վսեմ առարկայն պահանջէ զգովանի, զմտադիր և զշրջանկատ դատողութիւն, ես հարկաւոր համարեցի յօրինել վասն այսր զառանձին ծածուկ Կօմիտետ, և ընտրեալ ի պաշտօն անդամոց նորա՝ զգեներալ Մայոր Բեհրուդոֆն, զՊրոֆէսոր Ջրպետեան, զՍերոփէ վարդապետ և զԿօլլէժսկի Աստէսոր Օզկինն, որ զոյգ ընդ այսմիկ պաշտօնի ունի լինել և գործավար Կօմիտետի, ես բոլորովմբ կամ միամիտ թէ դուք, ողորմած Տեաւրք, լիապէս ունիք արդարացուցանել զիմ ապահովութիւն, լցուցանելով զեղեալն ի վերայ Ձեր զգործ կատարեալ յառաջադիմութեամբ և առանց սակաւիկ իմն տարածայնութեան:

« Առաքելով ընդ սմին ըստ առանձին ցուցակի զամենայն զթուղթսն, վերաբերեալս գործոյն՝ որ յաղագս կարգաւորելոյ զկառավարութիւնն Հայոց եկեղեցւոյ, ես հարկաւոր համարիմ յարակցել, թէ պարտաւորութիւն Ձեր ունի պարունակել յինքեան զյետագայս:

« 1. Նախ քան զամենայն պարտէ զննել զթուղթսն, որք կան առաքեցեալ առ իս ի նախարարութենէն և բաղդատել զնոսա ընդ ծանօթութեանց՝ առաջարկելոյ ի Տէր Պրոֆէսոր Ջրպետէ, ունելով ի նկատի և զլուծումն, զոր տալոց է նա՝ Ջրպետն՝ առ հարցմունս Տայնի Սօվէտնիկ Բլուդովի:

« 2. Ածեալ այսու եղանակաւ ի կարգ հաւասարութեան զայն և զմիւս տեղեկութիւնսն և լրացուցեալ զայնոսիկ՝ եթէ հարկաւոր համարեցի այս՝ համեմատեցէք զնոսա ընդ բարձրագոյն ընտրեցեալ Հայոց հոգեւորականութեան և Ազգի հրովարտակաց, ընդ Սահմա-

Այդ պատրաստ գումարն՝ էջմիածնայ Գէորգեան ճեմարանին շինութեան համար ծախսուած է, ինչպէս որ փորագրուած է՝ նոյն ճեմարանին ճակատը դրուած արձանաքարին մէջը՝ ՅԱՆՈՒՆ ՀԱՅՈՅ ՎԻՃԱԿԻՆ ԱԺՏԱՐԹԱՆՈՒ ԸՍԵՆՈՎ, առանց Սերոփէ եպիսկոպոսին առնել յիշուելու: Երբզեան հերսէս Աշտարակեցիին՝ ամբաստանեալ եպիսկոպոսին վրայ քննութիւններ բացած, և Մայր-Աթոռոյն բաւական կորուստներ պատճառելն հաստատած լինելով, սորա փոխարէն պարտական համարուած է Սերոփէն, որով իրմէ մնացած գիւղին հետ՝ այդ գումարն՝ յանուն վիճակին, ազգային սեպակականութիւն դարձած, և Մոսկուայի կայսերական դրամատան մէջ ի պահ դրուած էր երկար տարիներ:

նադրութեան սրբազան կառավարիչ Սինօգին Ռուսաց ընդ հոգեւոր կանոնադրութեանց (բէզլամէնդ) վասն կառավարութեան եկեղեցական գործոց և ընդ այլ օրինադրութեանց Ռուսաց, որք կան նշանակեցեալ ի սմին եղեալ քաղուածոյն:

« 3. Հաւաքեալ ըստ կարելութեան անթերի և մանրամասնօրէն զամենայն՝ որ ինչ վերաբերիցի առ այս առարկայ, դուք վերահայեցիք և ապա զնախընթացաբար յօրինեցեալ ի Ջրպետէ Պրօէկտն (ծրագիրն) և յետ ուշի ուշով առնելոյ ի վերայ այնորիկ զշրջանկատ դատողութիւն՝ յօրինեցէք միակամ համաձայնութեամբ զլուրի հանգամանօք Պրօէկտ Սահմանադրութեան յաղագս կառավարութեան հոգեւոր գործոց Հայ եկեղեցւոյ: » և այլն, և այլն:

Պաշտօնագիրը կը վերջանայ հետեւեալ եզրակացութեամբ:

« Ես բոլորովին քաջայայտ եմ զի յայտնի հմուտութիւնք ձեր և եռանդաւորութիւն առ ծառայութիւն Նորին Կայսերական Մեծութեան արդարացուցանելոց են զիմ՝ առ Ձեզ յանձնարարութիւն յայսմիկ վսեմ գործոյ: »

Վերոյիշեալ Յանձնախումբն ըստ հրապարակ խմբագրելով առաջադրեալ Պալլաժեկիան՝ կայսերական հրովարտական հաստատուած և հրամայուած է ի գործադրութիւն 1836 Մարտ 11 ին:

Պալլաժեկիայի յղացումը կ'սկսի 1828 էն, և Ֆէլդ Մարշալ Կրաֆ Բաքեիչի վերոյիշեալ պաշտօնաթղթէն ալ յայտնապէս կ'իմացուի որ Պալլաժէիայի յօրինման համար կանխաւ խորհրդակցութիւններ տեղի ունեցեր են Յակոբ Եահան-Ջրպետեանի հետ, որոյ նախաձեռնութեամբ Պալլաժէիայի նախագաղափարն ծրագրուեր է: 1830 ին պաշտօնապէս ի հանդէս բերուեր է: Յանձնաժողովոյ միւս երեք անդամք եւս անուանուած են Երեանու նահանգապետին կողմանէ:

Իբրեւ միջանկեալ, ըսեմք նաև թէ 10 Գլուխ կամ 144 յօդուածներէ բաղկացեալ և հաստատուեալ Պալլաժէիայի Ռուսերէն բնագիրն՝ առաջին անգամ պաշտօնապէս ներկայացուած է Կարբեցի Յովհաննէս Բ՝ Կաթողիկոսին՝ Յանձնաժողովոյ հայազգի անդամ Բեհրուդեանց իշխանի ձեռօք՝ ի գործադրութիւն, և որ ի Հայ թարգմանուած է Ս. Սինօգի ատենադպիր Մկրտիչ Գարտաշեանցէն(1):

(1) Գարտաշեանց թաղուած է յէջմիածին, ի շարս կաթողիկոսաց:

Երբ Ներսէս Աշտարակեցիին կաթողիկոսանալով ի Մայր Աթոռ կուգայ, ուր եպիսկոպոսներն միանալով՝ Նորին Վեհափառութեան կը գանգատին թէ՝ «այս ո՞վ էր, որ բարձրաստիճան եկեղեցականաց կարգին մէջ պիտի հանգչի»:

Առ այս պաղ արեամբ կը պատասխանէ Աշտարակեցի Կաթողիկոսն՝ «Ե՛հ, այսչափ հովիւներուն պահապան մը պէտք է»:

Եահան-Ջրպետ՝ Ներսիսեան վարժարանին մէջ Փրանսերէնի դասատուութեամբ հանդերձ, իբրեւ մոտերիմն ու սիրելին Ներսէս Աշտարակեցւոյն՝ կէստեսչութեան պաշտօնն եւս վարած է քանի մը տարիներ ու ապա հրաժարած:

Յետոյ, Ռուսոյ տէրութեան կողմանէ առանձին թոշակ կ'ընդունէր:

Բրոֆէսոր բառը՝ իբրեւ պատուանուն կը տրուէր իրեն, մանաւանդ Ռուս Լազարիկներու ու կնիազներու կողմանէ, անշուշտ գնահատելի ծառայութեանց փոխարէն:

Եահան-Ջրպետ՝ փափաքելով որ անգործ չմնայ, ու հրապարակին վրայ պաշտօնական զբաղմունքով մը երեւի, Տիկնոջը հետ միանալով մասնաւոր վարժարան մը բացաւ ի Տիֆլիս, ո՛ւր Հայերէն և Փրանսերէն դասեր կուտար: Այլկանց Փրանսերէնի դասերը՝ տիկինը կ'աւանդէր:

Ջրպետ՝ իւր վարժարանին գոյութիւնն բաւականին ապահովցուցած էր, ստանալով ոչ միայն երկսեռ աշակերտներէն ամսական թոշակ, այլ և տեղական կառավարութենէն պարբերաբար՝ կըլորիկ գումարներ:

Սիրելի հանդիսացած էր՝ ոչ միայն Ռուս գլխաւոր պաշտօնատարաց, այլ և Տիֆլիսու վիճակաւոր՝ Կարբեցի Յովհաննէս Արքեպիսկոպոսին (ապա, կաթողիկոս) մոտերիմն ու խորհրդականն էր, ինչպէս կը վկայէ նաև Լազարեանց ճեմարանի 25ամեայ բազմադիւն կրօնասոյց և երկասէր Մսեր Մագիստրոս Մըսերեանցի 1827-1831 ի էջմիածնայ վիճակին նկատմամբ տողած վեպին մէջ, որ Պատմութիւն Կաթողիկոսաց էջմիածնի մակագրով երկասիրութեան վերջին հատուածն է: Ընդ միշտ յարաբերութեան մէջ կը գտնուէր թղթակցութեամբ՝ Աստրախանայ Սերովքէ Արքեպիսկոպոսին(1) հետ:

Ջրպետ՝ իւր ապրուստն ու կապուստն ապահովեալ նկատելով, վերոյիշեալ թէութիւններով, մտադրած է բոլորովին հաստատուել Տիֆլիսու մէջ, և 10 տարիներու մօտ ապրելով անդ, ըստ ոմանց ի Փարիզ կը վերադառնայ, և ըստ այլոց՝ Տիֆլիսէն հեռանալով՝ ուրիշ քաղաք մը կ'երթայ և կը վախճանի օտարութեան մէջ 1838ին, (ըստ Բաղմուլեպի՝ 1834), ի հասակի վաթսուն և վեց ամաց:

(1) Սոյն Սերովքէ վարդապետ՝ եփեմ կաթողիկոսէն ընդունած է իւր Եպիսկոպոսութիւնը: Իբրեւ գրական գործ՝ ՄԱՂԻԿ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՅԱՆՈՒՆՈՎ գիտնական մատենան մը յօրինած է: 52 պատկերօք, ի պէտս դպրոցաց, տպեալ ի Մոսկուա, 1819:

Շահան-Ջրպետի կենաց նկարագրին մանրամասն գծերն աւելի զինքը մօտէն քննողները կրնան գիտնալ, ինչպէս որ գիտէր Պատկանեանց Տ. Գարրիէլ աւագ քահանայն, որ իւր մի անտիպ երկասիրութեան մէջ՝ գրած է Շահան Ջրպետի նկատմամբ ընդարձակօրէն, և որոյ հետ Շահան-Ջրպետ չափուած է՝ իբրեւ ժամանակակից ուսումնական և լեզուագէտ անձն:

Եթէ չեմ սխալիր, կը յիշեմ որ՝ Պետարապոյ և Նոր-Նախիջևանի Առաջնորդ՝ Այվազովսքի Գարրիէլ վարդապետն հովուական շրջաբերական մը գրած էր, որոյ դէմ երկարածիգ քննադատութիւն մը գրելով վերոյիշեալ հմուտ աւագ քահանայն, ի մէջ այլոց, շեշտած և խստիւ ձաղկած է ի Հովմէականութենէ վերադարձող վեդարաւորներն ու գործիչները:

Սոյն քննադատութեան մէջ՝ ոչ նուազ ակնարկներ ուղղած է Տփլիսու ութիւններով (մեր բառը չէ՝) լեցուն Դպրանոցին նկատմամբ, չխնայելով միանգամայն իւր սուր սլաքներն՝ այս առթիւ նաեւ Շահան-Ջրպետի մասին, և այսու՝ լաւ մը հարուածած է զմեծանուն գաղղիաբանն:

Պատկանեան Գարրիէլ Աւագ քահանայի սոյն ձեռագիր երկասիրութիւնը, ինչպէս նաև մեծահամբաւ նախկին կաթողիկոսի մը դէմ տողած կենսագրական մի ուրիշ դառն քննադատութիւնը տեսած եմ Գէորգ Գ. ի բանաստան մէջ(1):

Շահան-Ջրպետի ձեռագրաց հաւաքածոյն, կամ գրական հատակոտորքն՝ չեմք գիտեր թէ՛ այս պահուս ո՞րոց քով կը մնան, սակայն յիշմիածին կը լսէի թէ՛ մասնաւորաց քով պահուած քանի մը կարեւոր ձեռագիր նամակները կը գտնուին:

Չեմ գիտեր թէ՛ զՅԱԿՈՎԷ ՇԱՀԱՆ-ՋՐՊԵՏՆ կրցա՞յ ըստ արժանւոյն ներկայացնել: Կը տարակուսիմ:

Ապաքէն, գրեցի ես՝ որչափ կը ներէին Մաղիկի սուղ էջերն, և հրատարակութեան անձուկ շրջագիծը:

Ա. Յ. ԱՅՎԱԶՅԱՆ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

* * * Ի Զմիւռնիա.— Կոչնագիրը ե՞րբ ստորագրուած է և դատաւարութեան համար ի՞նչ օր որոշուած է, հաճեցէք իմացնել: Ձեր նամակէն որոշ չհասկըցուիր:— Միւս խնդրոց մասին քանի մը օրէն նամակ կ'ստանաք:

(1) Զմոռնաք յիշեցնել թէ՛ Մատթէոս կաթողիկոսի Բարի մարգ եւ բարի քրիստոնէայ անուն հեղինակութեան դէմ Միսիօնարաց գրած քննադատութեան յԱնգղիարէնէ ի հայ թարգմանուած ձեռագիրն ալ՝ վերոյիշեալ երկու ձեռագրաց հետ միասին կը գտնուէր:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

— ՀԱՅԵՐԷՆ ԼԵՂՈՒԻՆ՝ Պուլկարիոյ Հայոց վարժարանաց մէջ ուսուցման արգելքը հրատարակուեցաւ թէ և, բայց այս հրատարակութիւն սխալ հասկացողութեան մը արգելք էր, վասն զի այդպիսի արգելք մը գրուած էր մի միայն յունական վարժարանաց մէջ յունարէն լեզուի աւանդման դէմ: Այդպիսի արգելիչ օրէնք մը սահմանուած չէ երբեք այն Հայ վարժարանաց համար որոնք աղգային եկամուտներով կը կառավարուին: Իսկ երբ Հայ վարժարան մը կառավարութեան նպաստիւք կը մատակարարուի, այն ժամանակ միայն կը նկատուի իբրեւ կառավարական դպրոց և կենթարկի երկրին ընդհանուր կըրթական օրինաց, որու համաձայն՝ առաջին երեք սարիներու մէջ աշակերտը կը պարտին Պուլկարեան միայն ուսանիլ, իսկ չորրորդ տարին սկսեալ Հայ աշակերտը կարող են ուսանիլ նաև հայերէն, պուլկարերէն լեզուի ուսումը մնալով իրենց համար միշտ պարտաւորիչ:

— ԵՐՈՒՍԱԴՆՄԷՆ, Սեպտեմբեր 19 թուականաւ կը գրեն մեզ. « Կաթողիկոսական խնդրոյն նկատմամբ կը զարմանամ: որ՝ մեծ կեդրոնի մը մէջ լինելով՝ մեզմէ տեղեկութիւն կը խնդրէք. մենք մինչև ցայսօր ուղիղ բան մը չեմք գիտեր: Նոր զարմանալիքն այն է որ Կաթողիկոսին նշանակմամբ լրագրաց ըրած յայտարարութիւնը չարթնէն աւելի է որ կարգացեր եմք, բայց տակաւին պաշտօնական հեռագիր չէ եկած. վեհափառը՝ ամենատարտամ վիճակի մէջ՝ իրաց վախճանին կ'ապաստան համարէր: »

— Ազգ. Պատրիարքարանի իրաւատութեան ներքեւ մտնելու համար դիմում ըրած են Կաթողիկ Հայոցմէ երեք եղբայրներ, Պետրոս, Պողոս և Յովհաննէս Դըրմըզեան: Այս առթիւ հարկ եղած օրինական գործողութիւնը կատարուած և նոր Թէգլէրէի Օսմանիյէները Բ. Դրան կողմանէ հաղորդուած են Ազգ. Պատրիարքարանի, որ գրած է Բերայի Թաղական խորհրդոյն ըստ այնմ կատարել արձանագրական գործողութիւնները:

— Պաղտատի Պատր. Փոխանորդ Գեր. Արիստակէս եպիսկոպոս Դերձակեան այսօր կը մեկնի մայրաքաղաքէս՝ իւր պաշտօնատեղին ուղևորելու համար:

— Արտաքին գործոց նախարարութեան Հպատակութեանց Դիւանին Տնօրէն Վսեմ. Օհան էֆ. Պաղտատեան, որ արձակուրդով Բարիզ կը գտնուէր, մայրաքաղաքս դարձած է:

— Մանգումէի Էֆքեար չորեքշաբթի օրունէ սկսաւ հրատարակուիլ իբրեւ առաւօտեան լրագիր՝ Սապանի դիրքով և 10 փարա գնով: Տարեկան բաժանորդագիրն է Պոլսոյ համար 100 դրուշ, դաւառաց համար՝ 140: Վեցամսեայ՝ կէս գին: Յաջողութիւն և յարատեւութիւն կը մաղթեմք:

— Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան հրաժարեալ մէկ անդամին տեղ, Գաղաքական ժողովը նոյն Հոգաբարձութեան անդամ կարգեց Մօստիշեան Մեծ. Յարութիւն էֆէնտին:

— Քէօսթէնճէի եկեղեցւոյն առժամանակեայ Թաղական Խորհրդոյ անդամ կարգուած են Պատրիարքարանի կողմանէ՝ Աբրահամ էֆէնտի Նուհուպեան, Գրիգոր էֆէնտի Մանիսալեան և Թագւոր էֆէնտի Պէնլեան:

— Գեր. Տ. Մովսէս վարդ. Կէօմ. րիւկճեան Պիլէճիկի Առաջնորդ ընտրուէր է:

— Յառաջիկայ կիւրակէ, Հոկտեմբեր 4, Գեր. Տ. Գրիգորիոս եպիսկոպոս Ալաթճեան՝ Բարակէօմրիկի եկեղեցւոյն մէջ՝ քահանայական ձեռնադրութիւն պիտի կատարէ, յանձին Տիրացու Սիմոն Տ. Մեսրովպեանի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աւստրիա-Հունգարիոյ Կայսեր ի Պուտաֆէշթ գումարուած Պատուիրակութեանց ժողովոյն մէջ արտասանած ձառը շատ խաղաղասիրական է:

— Հեսի Մեծ-Դուքսին հօրեղբայր՝ Հայնրիխ իշխանը. ամուսնացաւ Տարմըթատի Թատրոնին երգչուհի Օր. Միլէնայի հետ:

— Ճրգսիքներն իրենց մեռնող պետին տեղ ընտրեցին սպանիացի Հ. Մարթէնսը: Պապը հաւանած է:

— Բրուսիոյ երկաթուղիք, որք պետութեան կը պատկանին, նուազ հասոյթ տուած են այս տարի և այսու ելմտացոյցին մէջ բաց մը կը գուշակուի:

— Անգլիոյ Պալականոր բանաստեղծ՝ Լորա Ալֆրէտ Թէնիսոն ՏՅ տարեկան մեռաւ:

— Սերպիոյ Խնամակալութիւնը լրագրական յանցանօք ամէն բանտարկելոց ներում չնորհեց:

— Թուսիոյ Կայսրը, Կայսրուհին և գահաժառանգը Աքէրնիկից գացած են: — Ֆրանսայի Հանրապետութեան նա-

խաղաղ Պ. Քառնո կը գտնուի ի լի, Հան-
րապետութեան հարկերամեակին առթիւ
կատարուած հանդէսներուն մասնակցե-
լու համար :

— Պապը իւր եպիսկոպոսական ձեռ-
նադրութեան յիսնամեակին առթիւ նո-
րէն պիտի հրաւիրէ եղբր Արեւելեան ե-
կեղեցիները՝ միանալու Արեւմտեանին :

— Պերլիի Քաղաքապետ ընտրուեցաւ
Պ. Ձէլլի յառաջդիմական կուսակցու-
թեանէն :

— Սպանիոյ անգլիական դեսպանին
որդին՝ Պ. Սէսիլ Տըրըմընտ Ուոլթ 8 000
ոսկի պարտքով սնանկ հրատարակուեր է :

— Հապէշիստանի Մէնէլիք թագաւորը
Իտալիոյ հետ կնքուած դաշնագիրը միշտ
իբր չեղեալ կը նկատէ և 1889ին Իտա-
լիոյ Աղգային Պանքային կողմէ իրեն փոխ
տրուած 4 միլիոն ֆրանքը Թրանսսի
վաճառականաց հետ ըրած առևտուրէն
հաւաքելով ետ տուեր է :

— Յունաստանի նախարարապետ՝ Պ.
Թրիքոսիս Անգլիոյ Արաաքին գործոց
նախարար Լորտ Ռոզպէրիէն բարձրաս-
տիճան պաշտօնեայ մը խնդրեր է երկրին
եղմտական վիճակը բարւոքելու համար :
Պատասխանը նպաստաւոր է կ'ըսուի :

— Ռուսական նոր փոխառութիւնն ի
հրապարակ հանել ստանձնած է Ռոջիլտի
Պանքան :

— Ռուսիոյ մէջ անցեալ շաբթու մեծ
հանդէսներով տօնուեցաւ Սէրկէյի տօնը,
որ ժ.Պ. դարու թաթարական արչաւա-
նաց միջոցին մեծ դեր կատարած է :

— Անգլիոյ Արեւելեան Գծին չոգեհաւ
մը՝ Օֆիլը՝ 28 օր և 13 ժամու մէջ Բլի-
մութէն Աւստրալիոյ Քինկ Ճօրձ հասեր
է Բարեյուսոյ Հրուանդանին ճամբով :
Նոր ճամբայ մը շնորհատանի համար :

— Ռըմանի թաղումը կատարուեցաւ
կառավարութեան ծախիւք : Իւր ա-
ճիւնները Բանթէոն փոխադրել կ'ուզ-
ուի :

— Աւստրիոյ և Հունգարիոյ նահան-
գային մասնաւոր ժողովոց նստաշրջանն
փակուեցաւ անցեալ շաբթու : Չանազան
ցեղերուն իրարու հետ ունեցած ձգ-
տումը դեռ կը շարունակէ :

— Անգլիոյ նախարարաց խորհուրդն
Ուկանտան թողուլ որոշեր է մինչև
1893 մարտ 31 :

— Պ. Սքեմմոք՝ Նիւ-Եորք Հերալտի
Պէրլինի թղթակիցը՝ Համպուրկի մէջ հըն-
տախտաւորաց հետ կենակցելէ յետոյ
Բարիզ դարձեր է :

— Պուլկարիոյ մէջ ոչխարաց ծաղկախոտ
ծագեր է :

— Դրամական Միջազգային Համաժո-
ղովը պիտի գումարի նոյեմբեր 22ին ի
Պրիւսիա, մասնակցութեամբ 18 տէրու-
թեանց պատուիրակներուն :

— Պրիւսիայի սակարանին մէջ այսօր-

ուրնէ սկսեալ Օսմանեան Հանրային Պար-
տուց Գ. և Դ. կարգերուն վրայ զատ
զատ գործ պիտի ըլլայ :

— Աւստրիոյ քաղաքային օրինաց նոր
ծրագիրը չինող խորհրդարանական յանձ-
նաժողովը մահապատիժը պահել որոշեր է :

— Քօքեհնակի մէջ 250 մէթր բարձր
աշտարակ մը շինելու խորհուրդ կայ պա-
տերազմական տեսակէտով :

— Տահմեթի մէջ Թրանսսի գորքը Ռէ-
մէ գետէն անցնելով, Բակէսա գիւղին
առջև Տահմէցի գօրաց գէմ ճակատած է
և ի մօտոյ պիտի յարձակի :

— Պերլիի սեղանաւորներէն Օ. Շուլ-
ցէ իրէն քով տոկոսի դրուած ստակնե-
րէն 1,700,000 մարք շորթելէ յետոյ,
ինքզինքը ոստիկանութեան յանձներ է :

— Ռուսիոյ ձմրան հաճարի հունձքը
միջակ է եղեր :

— Նիքոլայեֆ-Խարքով երկաթուղւոյ
գծին վրայ Օսթրոֆքա կայարանին մօտ
թղթատար կառախումբը կողոպտուեր և
500,000 ռուբլի գողցուեր է : Երկաթուղ-
ւոյ պաշտօնէից վրայ կասկածներ կան :

— Մանչեսթրի մանարանաց 314րդ գոր-
ծագրեր են հարկերին հինգ զեղջը, հա-
կառակ գործաւորաց ընդդիմութեան :

— Նիւ-Եորքի մէջ Անձնասպանաց ա-
կումբին անդամներէն Պարլով Մուրհէդ
անուն հարուստ մը ինքզինքն սպաններ
է 21 տարեկան :

— Իրլանտայի նոր Փոխարքայն՝ Լորտ
Հուլիան անցեալ հինգշաբթի օր առաջին
անգամ Տըպլին գնաց : Ընդունելութիւնը
պաղ էր :

— Կալիֆօրնիա Սուանսի քաղաքին խոր-
հուրդը պատուքաղաքացիութեան տիտ-
ղոսը տուաւ հռչակաւոր Սթէնլիի :

— Պուլկարիոյ ելեմայց նախարարը
Արժանեաց պատուանշանին Ա. կարգն
ընդունեց Ֆէրտինանտ իշխանէն՝ Փիլի-
պէի Յուցահանգիսին յաջողութեան հա-
մար :

— Գերմանիոյ կայսրը կարմիր Արծուի
մեծ ժապաւէնը տուաւ Եգիպտոսի Խը-
տիվին :

— Իտալիոյ թագաւորն ու թագուհին
իրենց ամուսնութեան 25 ամեկին առթիւ
նուէրներ չպիտի ընդունին, և փոխանակ
նուէրներու, բարեգործական հանգանա-
կութեանց մղում տալու հրաւէր կը կար-
դան :

— Ռուսիոյ մաքսատանց հաշիւն այս
տարուան առաջին վեցամսէին մէջ ար-
տածմանց համար 160 միլիոն և ներած-
մանց համար 4 1/2 միլիոն նուազում ցոյց
կուտայ, որ սովորն ու հնտախտին հե-
տեանքն են :

— Ռուսիա 25 միլիոն ռուբլի թղթա-
դրամ հրապարակ հանեց : Այս տարի ալ
75 միլիոն եղաւ հրապարակ հանուած

թղթադրամին գանակութիւնն անցեալ
տարուան պէս :

— Մարոքի անգլիական դեսպանն իւր
անյաջողութենէն յուսահատ մեկնեցաւ :
Հիմա Թրանսսիի դեսպանը գնաց հոն, որ
միևնոյն նախնական պատիւներով ըն-
դունուեցաւ :

— Գերմանիոյ կայսրը Վիէննա կը
գտնուի երկուշաբթիէն ի վեր, յայցե-
լութիւն Աւստրիոյ կայսեր : Սև Արծուի
պատուանշանը տուեր է գահաժառանգ-
Պրէտէրիք արհիդքսին :

— Իտալիոյ երեսփոխանական ընտ-
րութիւնը պիտի կատարուին նոյեմբեր
6ին :

— Լիվրբուլի Քաղաքային խորհուրդը
պատուոյ քաղաքացիութեան տիտղոսը
տուաւ Պ. Կլատթոնի :

— Ֆրանսական Ակադէմիոյ անդամ
Քլաւիէ Մարմիէ մեռեր է :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնադաշտութիւնք . — Մէհմէտ
Խալիտ էֆէնտի՝ Օվալի (Կարին), Մահ-
մուտ պէյ՝ Այվալըքի (Պրուսա) և
Ջէքի պէյ՝ Գարլթալի քայմաքամ
անուանեցան :

Ընտրեալք . — Կայս. Պալատան և
Կիւմիւշ-Սուլի հիւանդանոցին բժիշկ-
ներէն՝ Տըթ. Նաքաշեան էֆ. իւլու
Բ. և Ատանայի կուսակալութեան
դիւանապետ Մէհմէտ Բաշիա էֆ. ի
Սանիյէ Բ. ատտիճանները տրուեցան :

Պատուանշանք . — Մայրաքաղաքի
խտալական դեսպան՝ Քոլլօպիանօ
կոմին Ա. Օսմանիյէ, Անատոլի եր-
կաթուղեաց տնօրէն Պ. Հիւկընէնի Բ.
Մէհմետիյէ, Հալէպի հեռագրական
և թղթատարական տնօրէն՝ Պէտրի
էֆ. ի Գ. Օսմանիյէ, և Գարահիւսարի
Սահիպի երեւելիներէն Իշլեան Եսայի
և Յակոբ էֆ. ներուն ու Ատորաղա-
րի քայմաքամ Մէհմէտ Նիւզէթ
պէյի Գ. Մէհմետիյէ պատուանշան-
ները տրուեցան :

— Րեժիի բաժնեկիւղիկերու գի-
ներն ատենէ մ'ի վեր կ'իյնան. պոտ-
ճառը կը կարծուի գլխաւոր սպառում
ստորին տեսակ ծխախոտին որ շատ
քիչ չափ կուտայ, ծխախոտի շատ
մթերը ունենալը և այս տարուան
հնձոց առատ լինելովը դարձեալ շատ
մթերը առնելու պարտաւորեալ լի-
նելը :

— Րեկլոտի առթիւ զինուորական
պատժապարտից 2/3 մասն աւարտող-
ներն ալ ազատ պիտի թողուին :

— Ի Սարգիստի հեռագրատուն մը բացուեցաւ :

— Սարգիստուն միջերանոյններուն հաստատուն լինելն հաստատող տեղեկագիր տրուած է քննիչ յանձնաժողովոյն կողմանէ :

— Պրոստայի մէջ անցեալ չորեքշաբթի շերտ նաբուծական մրցման մրցանակաց և վարժարանին ընթացաւարտից վկայականաց բաշխումը տեղի ունեցեր է մեծ հանդիսիւ :

— Պանտրում-Քոնէս և Քասապայի երկաթուղեաց համար Օսմ. Պանքան համաձայնած է Պ. Նաքեւմարբերի հետ :

— Մայրաքաղաքիս Մէտրէսէներու ուսանողաց դրամական նուէրներ բաշխուեցան Վեհ. Սուլթանին կողմանէ :

— Ֆաղաքսպետութիւնը պիտի համաձայնի Զրոյ ընկերութեան հետ Վոսբորի գիւղօրէից մէջ խմելու ջուրը պակսած տեղերը գոհացնելու համար :

— Զմիռնիոյ խշումեթ լրագրոյ արտոնատէր՝ Ահմէտ Ճէլալէտտին պէյ Ռիսկիքը թիմարեթ անուա՞ք առեւտրական թերթ մը պիտի հրատարակէ թուրքերէն, փրանսերէն և յունարէն լեզուներով :

— Գաղտնիս. Պաղտատ երկաթուղւոյ գծին քննիչ յանձնախումբը նախընթաց շաբթու Տիգրանակերտէն անցեր է :

— Իստանբուլի դեսպանն անցեալ ուրբաթ օր Վեհ. Սուլթանին ներկայանալու պատիւն ունեցաւ :

— Հրէի նոր գործիներ ապապրուեցան յերուսա :

— Գաղտնիս զրկուեցան Պուլիա. րիայէն գաղթող 60 իսլամ ընտանիք :

— Զոռնաց Պատրիարքարանի խառն ժողովոյն անցեալ շաբթուան նստին մէջ Սարաքիթի պէյ և Պ. Կուրճի սաստիկ վէճ մը յարուցեր են և նիստը փակուեր է :

— Պամանկըզի (Սերաստիա) մօտ թըղթատարը կողոպտող և ստիկան մը սպաննող Հաճի Քէօյցի Խօրտան օգլու Գասպար աւազակը Գաղտնիս մէջ ձերբակալուեր է :

— Տիպար ազարսիւսց մէջ անտաններ ալ պիտի կազմուին :

— Տարստմիկ առողջապահական պաշտօնէայնները պիտի փոխուին :

— Տիգրանակերտի ու չըՎակայից մէջ պաճարախտ երեւան ելեր է :

— Արշիպեղոսոսի մէկ քանի քաղաքացի մէջ աճառ շինելն արգելուած էր մէջը հող դրուելուն համար, սակայն գործարանատեարը վերստին արտօնութիւն խնդրեր են, առանց հողի աճառ շինել անկարելի դատելով :

— Գաւառ քաջայի ձորին փակման գործողութեանց ու հաշուոց հսկող մարմնոյն նախագահ կարգուեցաւ Բրտովան փաշա :

— Զոռնաց Պատրիարքարանը 2,000 ոսկւոյ փոխառութիւն մը պիտի ընէ իւր պաշտօնէից յետնեալ ամսականները վճարելու համար :

— Կասապարական բոլոր վարժարանաց երկերկու աշակերտաց լուսանը կարն հանուելով, Վեհ. Սուլթանին պիտի մատուցուի :

— Համիտիէ հեծելազնոց կեդրոնավայրերուն մէջ վարժարաններ պիտի բացուին :

— Նազիլի (Ալտըն) մէջ երկրաշարժի սաստիկ ցնցումներ զգացուելով, 10 տուներ ու ջաղացք մը փլեր են : Մարդու կորուստ չկայ :

— Միսիլիի նաւահանգստին մէջ քարափ մը պիտի շինուի տեղոյն քաղաքպետութեան ծախիւք :

— Զմիռնիոյ մէջ յատուկ շէնք մը շինուած է՝ ազատուած գերիները պատսպարելու համար :

— Կեսարիոյ թղթատարը կողոպտող Զուլ օղլու աւազակը Հալէպի մէջ ձերբակալուեր է :

— Լիւսնանոս կառավարիչ Նաում փաշա ըստ օրինի վարչական խորհուրդը լուծելով, նոր ընտրութեան հրահանգ տուեր է :

— Քրազմէի մաքրանոցին մէջ հեռագրատուն մը բացուած է :

— Զմիռնիոյ մօտ Քարչը-Եաքաանուն տեղը պարզ նախկներու համար նամակատուն մը բացուած է :

— Ֆասապայի երկաթուղին գնող և Պանտրում - Աֆիօն - Գորահիտար-Քօնեա գիծը շինելու յանձնառու եղող դրամատեարը խումբը կազմուեր է ի Բարիզ :

— Ֆրիի ճէպը գիւղին մէջ անառնոց հիւանդութիւն երևան ելեր է :

— Զմիռնիոյ մէջ անցեալ չորեքշաբթի զիրար ատող երկու Բայն երիտասարդք սրով մենամարտելով ծանրապէս վիրաւորուեր են :

— Միսիլիի կողմերը աւազակներ հալածելու համար գացած իրթօղլու հեծելազնէն զինուոր մը դիպ-

ուածաւ գիւղացի մը սպաննած լինելով, դատուեցաւ և իւր կրած բանտարկութիւնը բաւ համարուելով ազատ թողուեցաւ : Գիւղացւոյն ժառանգորդաց 50 ոսկի պիտի վճարէ, զոր Վեհ. Սուլթանը շնորհած է :

— Ի Մէլանիք ծաղկախտ երեւան ելած է :

— Անտուն ունեցողներէն 2 զրուշ առնուելով գողցուելէ և այլ վտանգներէ զերծ պահելու համար յատուկ գրեր պիտի տրուին, և այսպէս անասնոց ընդհանուր վիճակագրութիւն մը պիտի պատրաստուի :

— Աշիթի թմրոս վարժարանին աշակերտք պատուաստուեցան :

— Համիտիէ հեծելազնոց նոր դըրօշակներ զրկուեցան :

— Թիմիլիի ընկերութիւնը շատ ապրանք գնելու պէտք ունենալով, հարիւրին հինգ տոկոսաբեր 5 միլիոն ֆրանքի նոր բաժնեթուղթ հանեց ի հրապարակ, որ ամբողջովին ստորագրուեցաւ :

— Ֆաղաքսի բժշկական վարժարանը շատ կանոնաւոր ընթացք մ'առած է Զէքի փաշայի տնօրինութեան յանձնուելէն ի վեր :

— Առեւտրական նախարարութիւնը Ֆրանսայէն ու Ամերիկայէն հնձոց հատիկներ բերել տալով, գաւառները զրկեց փորձեր կատարելու համար :

— Բերայի մէջ կառուցուելիք կրանտ Օթէլ Էնթէրնասիօնալ պանդոկին հիմնարկութիւնը կատարուեցաւ :

— Դամասկոսի կառավարական շէնքին Էվքաֆի մասն այրեր է : Թուղթերն ու տետրակները ազատուած են :

— Երուսիոյ մէջ խահուէին գինը 5 շիլին բարձրացած է :

— Միսիլիոյ մէջ Տիգրան անուն մէկը կինը խեղդելուն համար ձերբակալուած է :

— Տրապիզոնի վերաքննիչ ատենի պատժական ճիւղին նախագահ Հիւսէյն Շիւքրի էֆ. (կրօնաւոր) եօթը լեզուաց կատարելապէս և եօթը այլ լեզուաց մասնակի տեղեակ է եղեր : Հայերէնը վերջնոց մէջ է : Ինքը՝ քնիկ Մանսուրբեյի է :

— Խարբերդի մէջ անասնոց հիւանդութիւն ծագած լինելով, մեռնող անասնոց դիակները հարկ եղած կերպով չեն նայուիր և առողջստացական կանոնաց հակառակ զեղծումներ կը կատարուին եղեր :

— Պերոսի իշխողը լրագիրն ամսական մը դադարման դատապարտուած է :

— Անոց Արտուսի գիւղէն անաւաններ յափշտակեր է Տէրսիմի քիւրտերէն խայրողը : Սէյտօ իւր քանի մ'ընկերներով, այլ հալածուելով՝ յափշտակածներն ետ թողեր է :

— Սոյսարարարի ու շրջակայից այգեայ քարտէսը կը պատրաստուի, որ թաղութիւնէ վարակուածներն հասկընալու համար :

— Աշիւթի վարժարանին կից գտնուած տունը նոյն վարժարանին համար հիւանդանոցի վերածուած է և բժիշկ մը, վիրաբոյժ մը ու դեղագործ մը կը հսկեն աշակերտաց առողջական վիճակին :

— Սիւրիյի վարժարանին միջանակարգաշրջութեան հանդէսն երկուշաբթի կատարուելով, 49 աշակերտներ առաջին կարգի արտասովոր մըրջանակ ստացան. առնց մէջ գտնուող Հայերն են. Նիկողոս, Գէորգ և Հրմայեակ էֆէնտիները : Վարժարանին շրջանն 7 տարւոյ բարձրացած լինելով, վկայականի բաշխում չկատարուեցաւ :

— Համագաղի Անկեղանոցի շէնքին կառուցումը ստանձնելու համար 5000 ոսկեայ նոր զեղծ մ'առաջարկած, վասիլքի էֆ. Ազնաւորեան Յովհաննէս էֆ. 59000 ոսկեայ գնոյն վրայ :

— Շքտարայի Եայաքի Մալիճ թաղն անցեալ երկուշաբթի յորդառատ անձրևներէն տուներ փլեր, 3 անձինք մեռեր և 20 անձինք ծանրապէս վիրաւորուել են :

Հետախու. — Եարթուս Մարսիլիոյ մէջ տեղի ունեցած կասկածելի դէպքերու տարածայնութիւններ եղան, որք սակայն հերքուեցան : Այլ կայս. կառավարութիւնը կանխազգուշութեան համար Միջերկրականի ֆրանսական ծովեզրէն ուղեւորով եկող նաւուց համար 10 օր և առանց ուղեւորի եղածներուն՝ 5 օր, իսկ Տրապիզոն-Օրտու ծովեզրէն եկող նաւերը 5 օր և առանց ուղեւորի եղածները 24 ժամ քարանձինա պիտի սպասեն բժշկական խիստ այցելութեամբ : Պուլկարական սահմանագլխոյն վրայ, ի Տէվէ Պալըրտան, նոր մաքրոնոց մը հաստատուած է : Մուսթաֆա-Բաշա քարանձինային բարձրացմամբ 4 նոր տաղաւարներ շինուած են : Կարնոյ շուրջը առողջապահական նոր շէնքայ

մ'ալ հաստատուած է : Պուլկարի 11 օրուան քարանձինա սահմանեց եւ պայէն և 5 օրուան՝ Ռումանիայէն եկողներուն : Սերպիա և 3 օրուան, Պուտա Բէշթէն եկողներուն : Հունգարիոյ պահեստի զօրքն այս տարի ի գէն չպիտի կոչուի : Պուտա Բէշթի և Յէկըտի մէջ դպրոցը փակուած են : Կայս. կառավարութեան կողմանէ Պարսկաստան զրկուող զինուորական բժիշկները երեքշաբթի օր մեկնեցան : Երզնկայէն Բասէն բժիշկ ու դեղ պիտի զրկուի : Եարթուս նորէն վարակուած տեղերն են : Պայաղիտի գաւառին մէջ Գարաբելիսէ և Պուշիք, Օվա գաւառակին մէջ իլիճէ, ի Եմէն, Սանաա գաւառին Էօմիսն գաւառակին ճէնին գիւղը, Պարսկաստանի մէջ, Վերամին և Կէրիւզ, Արդուին, ևն : Սանտկայած է ի Կարին, Կաւկասիոյ մէջ քանի նահանգներուն մէջ, ի Պուտա Բէշթ, ևն : Անհետացած է ի Տրապիզոն, Բեթերսպուրկ, ևն, Համպուրկի մէջ սկիզբէն մինչեւ 19 սեպտեմբեր 17'673 վարակուող և 7522 մեռնող եղեր է :

— Նոր զինուորներ. Հոսէյտա շոգենաւը նախընթաց օր 191 նոր զինուորներ բերաւ Տրապիզոնէն :

— Հայրապետ վարժարանին երկրագործական մասին բացումն հինգշաբթի օր կատարուեցաւ, ինչպէս նաև անասնաբուժական մասին մըրջանակայ բաշխումը :

— Գաղտնիք երկաթուղւոյ գիծը մինչև Մալիքէյ աւարտած է, որ քաղաքէն 7 ժամ անդին է :

— Ժողային նախարարը Մախսուէի համար երեք շոգենաւ գնած է, մին՝ 2,500 և միւսները 500ական տակաւաւաւի տարողութեամբ :

— Արիստոտել Նումանէի թէրաքը վարժարանին աշակերտուհի լաթիֆէ հանրմ զարգարուն Թուլրա մը շինելով վեհ. Սուլթանին մոտուցած է, որ անոր գաշնակի մը ստակ վճարել հրամայեց, ինչպէս նաև նոյն վարժարանին անհրաժեշտ ծախսեց համար 700 զրուշի ամաթոշակ մը յատկացնել :

— Բեթիկ իւր բաժնեթղթոց վրայ վճարեալ գումարէն 50 ական ֆր. ետ պիտի տայ, այսինքն ընդ ամենը 10 միլիոն ֆրանք՝ առաջին տարւոց փաստը գոցելու համար :

— Պէթիլգիի Տրէնէ գաւառակին մէջ սով ծագած է : Հոն զրկուած

արմուիք մաքսէ ազատ պիտի ըլլան և 70000 քիլէ արմուիք պիտի բաշխուի կարօտելոյ :

— Հոնգարիայէն ձիեր բերելով ժողովրդեան պիտի բաշխուին երկրագործական Դրամատան կողմէ, Թուրքիոյ մէջ ձիերու տեսակն ազնուացնելու համար :

— Թեփե-Պաշի շէնքը չպիտի փլայուի այլևս. մնացած մասերն հաստատուել են եղեր :

— Պոլսոյ շրամարները պիտի մաքրուին. արդէն շուրջ շատ նուազած է :

— Անատոլոյի երկաթուղեայ ընկերութիւնը դիակի փոխադրութեան համար մէկ հազարամէթրին 5 1/2 զրուշ սովագին որոշած է՝ ընդհանուր գումարը 200 զրուշը չանցնելու պայմանաւ :

— Երկրաշարժ. երէկ առաւօտ ժամը 1ին երկրաշարժի ցնցում մը տեղի ունեցաւ ի Պոլիս և տեւեց երեք երկվայրկան :

ՏՕՔԹԷՕՐ ԶԱՐԴԱՐՆԱՆ

Կայսերական Բժշկական ընկերութեան մասնաւոր քարտուղար Տօքթ. Զարդարեան էֆէնտի, Թագսիմի Ս. Յակովբայ Հիւանդանոցին գլխաւոր վիրաբոյժը կարգուած լինելով երեք ամիսէ ի վեր, վիրաբուժական շահագրգիռ ուսումնասիրութիւն մը պատրաստած է զոր ի մօտոյ պիտի ներկայացնէ նոյն ընկերութեան ընդհանուր ժողովոյն :

Մեզ կը հաւաստեն այս առթիւ թէ, յարգելի բժիշկն այս կարճ ժամանակամիջոցին մէջ իւր օգտակար խորհուրդներով և խղճամիտ գործունէութեամբ մեծապէս նպաստած է նոյն Հիւանդանոցին ներքին կազմակերպութեան գործին, և այսու արդարացուցած է բժշկական դասուն մէջ իւր արդէն վայելած բարի համբաւը :

Ա Ր Ժ Է Բ Դ Ր Ա Մ Ո Ց

Սամ. լերան 100 զըշէն

Մէճիտիէ	107 8	Վ. Կցնոց	102
Գաւարդ. մէճիտ	106	Բուսից բօլ	90
Մանր. մէճիտ	101	Նարդէն	87 26
Մէթալիք	99	Գրիմից	51 20
Հինգնոց	101	Անգլ. լերա	110 14

Մանթի թղթագրամ 9 2

Գ. Տոսլիտէ	24 13	Բուս. երկ.	94 5/8
Թահվիլ. Օսմ.	83 8	Թասվիլէ	48

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՉՈՒՆ

Ինչո՞ւ չեն խօսիր մայրենի լեզուով մեր հայրերն ու եղբայրները, ծերերն ու երիտասարդները միանգամայն, իրենց տանց մէջ, մտերմական հաւաքումներու և ընկերական շրջանակի մէջ իսկ. ի՞նչու արդեօք Պօլսէն սկսեալ գաւառներու, ինչպէս և գաղթականութեանց մէջ ալ շատեր կան որոնք չեն խօսիր մայրենի լեզուն՝ ժողովրդային, հարուստ, անմահ՝ զոր քանի պրպտես, երևան կ'ենէ իւր թաքուն գանձերով, անսպառ ալազան ճոխութեամբ, այն լեզուն՝ որ գրեթէ նոյնն է, ի՞նչ որ այնքան խանդով և պատկառանքով կ'արտաբերեմք սրբաբոյր միջնորդներու մէջ ուր սրտերը միայն կը խօսին և ուր կը բուրբ խունկն Աստուածային, խնկելով մեր սրտերն ու հոգիներն ալ:

Անարդարանալի անտարբերութիւն մը չէ՞ միթէ, մէկ կողմէն ալաւորութեան գործածութիւնը ընդհանրացնել և միւս կողմէն չխօսիլ ժամանակակից լեզուն որով այնչափ հրաշալի կերպիւ գործածեցին բազումք, լեզու մը՝ կենդանի, պատկերազարդեալ, սրտազգեցիկ, որ ամբողջ սերունդներ ցնցած, սրտեր գալարած է:

Չեմ կրնար երբէք ըմբռնել թէ՛ ի՞նչ բան կը հարկադրէ մեր նորահաս սերնդեան մեծ մասը, դպրոցէն դուրս նետուելուն պէս, կրթական յարկին իւր հըրաժեշտի ողջոյն տալէ վերջ՝ փարիլ օտար խորթ լեզուներու. զարմացումէ տարբեր զգացում մ'ունինք ամէն անոնց համար, որք իրարու քով կուգան, չեն խօսիր մայրենի լեզուն, մայրենի բարբառը — անորո՞ք ընտանի մեր հոգւոյն համար — մանաւանդ այնպիսի ժամանակ մը՝ երբ բարոյական զարգացման պատմութիւն մը կ'ստեղծեմք մեզ համար, երբ մինչեւ իմաստասիրական մրտաճակներու կը նուիրեմք զմեզ և քաղաքակրթութեան անունով ալ կը պարծիմք: Տոհմային բարբառը որ իւր ոսկի շողերը ոսկեղարէն առած, նախահայրերէն ու պապերէն մինչև մեզ հասած է այնքան հոգեցունց, ներդաշնակ, ճկուն և փափուկ, ո՞հ, չյարգել ու չխօսիլ զայն, խզի ու սրտի դէմ է. զգացմանց տկար կողմերը ցոյց կուտայ: Այսպիսի տխուր երևոյթներու քով, եթէ բան գործ չունին գրագէտք ու լեզուագէտք, թող արիւն քրտինք թափեն, թող լեզուն մշակեն, սահմաններ որոշեն՝ համաձայնեցնելով գեղեցկագիտական ճաշակն և նրբին դարձուածքները երկաթեայ կանոններու հետ: Ի զուր չե՞ն այդ բոլոր տքնութիւններն ու ջանքերը, երբ լեզուն շատերուն հա-

մար կորուսած է իւր յատուկ բոյրն ու հրապոյրը: Ոչ, մենք այնպէս կը կարծեմք և կը հաւատամք թէ՛ մեր մէջ տեսնուած անտարբերութիւնը հետզհետէ ընդհանրութեան մոտժմանը առարկայ պիտի դառնայ և պիտի ջնջուին զգալի ունակութիւնք զորս հիներուն համար կարելի է համարել նախապաշարման և թերակրթութեան արդիւնք, իսկ նորերուն համար՝ թեթեւ դաստիարակութեան յառաջ բերած նորոճեում: Թիւնը, զոր շատ դժուար չէ արմատախիլ ընել, հաւատք գեղեցիկ և սիրտիածու

Բայց բուն իսկ մտածման կէտն հոս է. կրնա՞մք ունենալ այսպիսի հաւատք մը նաեւ այն հայ գաղթականութեանց համար, որք մեզմէ բաժնուած, մեզմէ հեռու, գուցէ սրտէ ալ հեռու. նժդեհութեան մէջ քիչ քիչ կը կորսնցնեն իրենց ցեղական բոլոր յատկանիշները: Տարիները իրարու ետեւ եկած են իրենց հետ ծրարել այդ հայ գաղթականութեանց հայ միտքն ու հայ լեզուն. որքան որ ժամանակը բաժնէ գիրենք գաղթականութեան թուականէն, այնքան աւելի օտարական կը դառնան, և կը պատմուի թէ՛ հայերէն գիտցող, մանաւանդ խօսող շատ քիչեր կան: Հոգեբանական այս կծու և տրամալուշ վիճակին քով, ի՞նչպէս կը մեծնան գաղթականութեանց նորահաս սերունդներն ալ: Քանի քաղցր է պանդուխտ ազգայնոյ մը համար տեսնել գեղալոյս սերունդը ոսկեժալիտ հրեշտակներ, որք մանկութեան անսուտեր և անստերիւր ժամերու մէջ իրենց բարբառով, վարդապոյն շրթներով կը սովորին միմեջեւ հաւատք ու սէր, յոյս և լոյս բառերը. ի՞նչքան վեհալուր և սրտառուչ կը հնչէ ծնողաց աւանջին մայրիկ կամ հայրիկ բառերը, երբ մանուկը՝ իւր լեզուով կ'արտասանէ զանոնք. կ'երանենք այն ծնողները որոնք օտարութեան մէջ իսկ հետամուտ կը լինին և մեզ չափ կը տենչան լոյս տալ իրենց զաւակաց, լոյս հրաշալի այն լեզուով՝ որ մերն է:

Կը վերջացնեմք վաղամեռիկ անմահ բանաստեղծին հետ կրկնելով՝
« Իմ մայրենի քաղցր լեզու,
Կեայ անսասան, կեաց յաւէտ.
Կեաց միշտ լեզուդ մեզ արժան՝
Կեայ՝ ծաղկալից, ծաղկաւէտ »:

ՎԱՀԱՐՄ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ՊԱՏԿԻՐ ԱՇԽԱՐՀԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԵՎՈՒՄԵՆ ՀԱՅՈՑ Ի ՎԵՐՉ ԿՈՅ ԺԹ. ՂԱՐՈՒ. ԸՆԴ ԽՆԱՄՈՎ Յ. ԳՈՐԳԵՆԻ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԼ Ա. ՄԱՍՐ. ԳԻՆ 3 ԴԱՀԵԿԱՆ:

ՍՏՈՐՆՈՒԹԻՒՆ ԿԱՆԱՆՑ

Ը Ս Տ Մ Ա Ր Դ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

(ANTHROPOLOGIE)

Գիտութիւն մը սկսեալ է կերպով իւրիւր անունովը սահմանուի. սակայն հաւառակն ստեղծ կը տեսնուի. Երկրաչափութիւնն ոչ զերկիր կը չափէ և ոչ գետինն, այլ որոշեալ քանի մը գծերու անունն և լուծումը կ'ուսուցանէ: Տիեզերագիտութիւնն (cosmographie) ո՛չ աշխարհագրութիւն է և ո՛չ աստղերու կանոնաւոր ուսումն, տիեզերաց գիտութեան հեռի բան մը: Մարդաբանութիւնն՝ փոխանակ զմարդ ուսումնասիրելու, գէթ շատերէ այնպէս կը կարծուի թէ կրօնի և անոր պաշտօնէից դէմ մարտնչելու միակ արուեստը լինի:

Կրօնի կամ նորա պաշտօնէից դէմ խօսելու կամ գործելու կրնան միտիլ ամէն անոնք, որոց նպատակն այնքան չիլի թէ՛ որքան ընտրած միջոցն: Նոքա ամենեւին քաջուիլ, իրենց լեզուին սանձ դնել չեն դիտեր, ըստ առածին թէ « լեզուն ոսկոր չունի », և ոչ ալ բերանը դուռ: Բանականութիւն և իմացականութիւն ո՛չ կը չափուին և ո՛չ կը կշռուին: Ուղիղ հետեւողութիւն առողջ մտաց արդիւնք է: Մեծաւ մասամբ մարդաբանք կշիռ 'ի ձեռին վճիռ կ'արձակեն. ահա՛ ցաւալին — Դրական փիլիսոփայութեան երբեմն հետեւելով՝ ամենէն առաջ նիւթակրօնութիւնն (materialisme) անհրաժեշտ դատեցին այս մարդաբանք: Նիւթակրօնութիւնն՝ որոյ շատ անձուկ են սահմաններն ամէն գիտութեանց մէջ, մանաւանդ յիմաստասիրականին, իբր օգտակար արդիւնք՝ բաժանումը ցուցուած է միայն: Մարդոց բաժանումն ընել՝ ըստ դրական իմաստասիրութեան՝ շատ հեշտ է: Ա. մարդոց մի մասը՝ տգէտ և անտեղեակ՝ չէ կարող Աստուծոյ էութիւնն և բարոյականին օգուտը ճանչնալ: Բ. կան կայտառ մտքեր, սակայն ծոյլ և թոյլ, որք բանի մը չեն հաւատար, վասն զի խորհիլ չեն ուզեր. հետեւաբար ճշմարտիւ դրականք են:

Արդ, մղում մը տուէք վերջնոց և առաջինք գետին կը փուլին, երկրորդները սոցա մարմնոց վրայ իբր ի պատուանդան կը բարձրանան. այս վերջինք են որ տարվինեան վարդապետութեան հետեւելով՝ աւելի բարձրագոյն դասուց մէջ կը ջանան խառնուիլ, և իրենց անձանց անպատշաճ վսեմ անուններով և մակդիրներով յորջորջիլ, այսինքն է՝ հընարագէտ և փորձառու կոչուիլ — Եւ սակայն երբեմն այդպէս փափագողք և այդ անուններով պաշտուող գիտնականք

կարծելով թէ ահաւոր բնութեան ահագին մատենին այլ ևս թարգման և մէկնիչ կարող են լինել, բաց աչօք հեգնութեամբ նայեցան, տղու պէս խորհեցան, գիւտեր, նորահնար օրէնքներ երազեցին, և առանց գուցէ բառ մը կարենալ կարդալու՝ գիրքը գոցեցին:

Ահա ընդհանրապէս ցայս վայր շողոքորդութեամբ « Գիտուն » անունը կրողներու ըրածն: Ամէն բան ներքի է անոնց, հազարաւոր կենդանիներ առնգայօրէն բզկտելէ չարչարելէ յետոյ կը զարմանան, կ'ալչին, թէ ինչո՞ւ իրենց ամենահնար փորձերուն չեն թողուր ենթարկել և իրենց նմանները գէթ մահապարտներն պէտք էր մեր ամենահաս գիտութեան իբր փորձ նշուիրել, կ'ըսեն այդպիսի:

Ամենավերջին նորահնար գիւտն՝ կամ այն հնութիւն՝ որոյ վրայ աւելի կը խօսուի այս օրեր, մարդաբանները մարդաչափ (anthropometriste) մակերին բարձրացուցած է: Սոքա լիտր և մեգր ի ձեռին՝ կը չափեն կը չափեցին, կը կշռեն, կը հանեն ու կը դնեն, և անսխալելի ծառութեամբ վճիռ կ'արձակեն. ահա վրձիւն: — « Ըստ (Dr. Browne) Պրոֆի, այր մարդոց ուղեղին միջին կշիռն է՝ 1350 կրամ, իսկ կին մարդոց՝ 1222 կրամ: Ուստի վերջնապէս և անհերքելի կերպով կը վճռեմ որ կին մարդ քան զայր ստորնագոյն է, վասն զի մօրուսաւոր երկուստեան գեղեցիկ էակէն ուղեղի 128 կրամ աւելի ծանրութիւն ունի: — Ահագին փառք մազոտ էակին:

Նոյն վարդապետներն (Docteur) վճռած են թէ = ուղեղին ձախակողմեան կիսագունտն աւելի կարեւոր է քան աջակողմեանն, վասն զի առաջնոյն մէջ է խօսելու գործարանն = և թէ՝ = կանանց աջակողմեանն աւելի ծանր է քան ձախակողմեանն =:

Ուստի ո՞րչափ սխալած պիտի լինի մարդկային ազգն խմբովին՝ որ շատախօս չաղակրատութեան առաջին պատուոյ մրցանակն փոխանակ իրեն սեպհականելու՝ իրաւամբ Եւայի դստերաց նուիրած է:

Ի՞նչ զարմանք, Հըքսլէ (Huxley) Անգլիացի մարդախօսն զանազան ցեղերու գանկերը քննելէ ու չափելէ վերջը, իւր հայրենակիցներն ամենէն բարձրագոյնը կը դասէ, ապա Գերմաններն, և Զարմանալին այս է, որ Մալայեացիք՝ օրանկուդանի հայրենակիցք՝ Փարիզի բնակչաց շատերէ բարձրագոյն դասուած են, սակայն միսթարական է տեսնելն որ՝ մոային տկարութեամբ վարակեալք՝ գանկաջափական աստիճանաւ Անգլիանչեան (Անգլ.) Ժողովրդէն բարձրագոյն դիրք ունին:

Աւրիչ մարդարան մը՝ ըստ միջին հաշ-

ւոյ գանկաբանութեան՝ մարդոց հետեւեալ երեք դասերը կը հաստատէ.

Ա. Յիմարներ.

Բ. Հարուստներ.

Գ. Գործաւորք և աղքատք:

Իսկ վերջին նորանոր գիւտք, զոր յիշեցինք, պիտի հաստատեն անշուշտ չորրորդ մ'ալ, որ է, Դ. Կնիկ մարդիկ:

Նւ սակայն արհամարելու չեմք, վասն զի յայտնի է որ այսչափ բան կը շուրջն ու չափել առանց ժամավաճառութեան և հաագին համբերութեան՝ եղած չէ և չիրար լինել մարդաչափ գիտունք « հետաքրքրականութեան » կարողութեամբ իրենց ըղեղը տակն ու վրայ ըրած են այս ամէնը գտնելու և ճշդելու համար, ուստի յարգել պարտիմք գիրենք: Միայն քիչ մը աղ ու պղպեղ կը պակսի. այդ է՝ առողջ միտքն:

Ի՞նչ կը խորհի արդեօք առողջ միտքն այսքան մարդաչափական նուրբ գիւտերուն վրայ: Ահա. — Որոշալ չափով նիւթի մը գինը հասկնալէն առաջ՝ ողջ միտքն ի՞նչ նիւթ լինելը կը հարցունէ, կը հասկնայ, Լիտր մը ջուրն և լիտր մը պատուական գինին նոյն գնով չեն ծախուիր: — Ուստի այսպէս երբ ըղեղի մը քանակը կշռուի կամ չափուի՝ պէտք է հարցունել, հասկնալ, թէ ի՞նչ տեսակ է ըղեղն, լա՞ւ թէ ոչ. « Ժրար կայ, Ժրար ալ կայ »: Ամենուն ծանօթ է այս առած, բաց ի գիտնոց: — Դժբաղդաբար գիտութիւնն բնաւ հետաքրքիր եղած չէ խմանալու՝ թէ լաւ և վատ ըղեղին կազմութիւնն ի՞նչ բանէ առաջ կուգայ: Մինչեւ ցայսօր անհոգ մնացած է առ այս, թէ և նորանոր փորձեր և հետազոտութիւնք անպակաս կը լսուին:

Ուստի թէ և մարդաբանք համախումբ ատեան կազմելով գոռան և որոտան և անդառնալի վճիռ արձակեն թէ, « կանայք քան զարս նուաստագոյն են », Գեղեցիկ սեռին իրաւունքն է արհամարհալէ մը նետել այդ Ժողովին վրայ ծիծաղելով, և ըսել. — Դանկաջափութեան վատառողջ կլիմային տակ անհնար է առողջ մտաց արդիւնք տեսնել:

(Քաղուած Le Valeriquais լրագրէն)

ԼԵՍՆ ՏԸ ՌՕՁՆԻ

Թ Ա Պ Ո Ւ Ն Դ Ա Ս Ե Ր

Դուզնաքեայ, աննշան և հասարակ առարկայից անդադար դիտողութիւնը անհրաժեշտաբար կը վարձատրէ զմարդ. վասն զի Աստուծոյ գործերը զարմանալի են և լի իմաստութեամբ, և մինչեւ իսկ ամենաչնչինն և ամենահասարակը դաս մը կ'աւանդէ:

Մեծահամբաւ և աշխարհածանօթ

իմաստասէրներն ընդհանրապէս անոնք եղած են որք դպրատանց մէջ երկարօրէն ուսանելու պատեհութիւն չունենալով հանգերձ, իւրեանց գիտական սլաշարը գոյացուցին պարզապէս հասարակ իրերը դիտելով: Մարդու մը ուրիշ մարդէ ունեցած տարբերութիւնը բազմիցս իւր դիտողութեան կերպէն կ'ախուսն ունի, և ահա այս պատճառաւ է որ այս ոք կ'ուսանի առաւել քան զայն ոք: « Աչք իմաստնոյ ի գլուխ իւր », կ'ըսէ Սողոմոն, « իսկ անմիտն ընդ խաւար գնայ »: Միտքն ևս կը տեսնէ հանգոյն աչաց: Անդ ուր անտարբեր նայողը ոչինչ կը տեսնեն, կորովամիտ անձինք խորերը թափանցելով՝ համարուած թագուն դասեր կը գտնեն ի նմա:

Այս կերպով՝ հոչակեալն Նեւտոնն ձգողական զօրութիւնն ուսաւ. իւր պարտիզին մէջ նստած էր աշնան օր մը՝ լուկ և միայնակ խորհելով թէ ի՞նչ էր պատճառն լուսնին դէպ յերկիր խնալուն, և զոյգ ընդ խորհրդոյն տեսաւ խնձորի մը խնալն. զարմանալով այս տարօրինակ զօրութեանը վրայ որ զինձորը դէպ ի երկիր քաշեց և յիշելով թէ նոյն զօրութիւնը կը տարածուէր նաեւ ամենաբարձր լեռանց գագաթան վերայ, մտածեց թէ « Արդեօք սոյն զօրութիւնն անհունութեան մէջ ալ կը տարածի », արդեօք լուսնին ալ կը հասնի՞ այն: Լուծեց խնդիրն և այս էր թագուն դասն զոր նա յերեւան հանեց: Կալիլիոս, մեծանուն իտալացին, գտաւ ժամացուցի ճօճանակին օրէնքը, դիտելով Պիղայի մայր եկեղեցւոյն բարձր առաստաղէն կախեալ ահագին ջահին հաւասար ճօճումներն: Քէլտոն Պրաուն՝ իւր ճամբուն վրայ մէկ կողմէն միւսը ձգուող սարդի մը թեւէն ուսաւ շինել տնկամար կամուրջը թուրք գետոյ եղերաց վրայ որուն մօտ ինք կը բնակէր: Իսկ Սըր Այսիւմպըրտ Պրիւննիչ, դիտելով փոքր որդի մը՝ ծառի մը կոճղին մէջ մերթ մէկ կողմ, մերթ ուրիշ կողմ փոքրը, յղացաւ գաղափարը շինելու թայմզ գետին ներքնուղին:

Գողմարոս լուսնին երեսին վրայ աշխարհի չուքը տեսնելով, հաստատեց թէ գնդաձև է, և երբ կը ճանապարհորդէր և իւր նաւաստեաց մէջ խռովութիւն մը ելաւ երկիր մը չգտնելուն համար, չընչին մամուռի մը տեսարանն էր որ վերջ տուաւ ամենայն երկրայութեանց թէ ցամաքը մօտ էր:

Մեր առօրեայ կենաց մէջ ամենափոքր և շնչին իրերն իսկ մեզ կը ներկայացնեն իւրեանց մէջ ամբարուած թագուն դասերէն զոմանս:

Նրբ կը մտածեմք այն գնդերուն վրայ որ դարերով թաւալած են և դեռ պիտի թաւալին ապառնի դարերուն մէջ:

և կամ երբ կը քննեմք ճամբուն եզրը աճող փոքրիկ ծաղկին չքնաղ գոյները, կ'ուսանիմք նոցա Արարչապետին անհուն կարողութիւնն:

Այսպէս, կը տեսնեմք թէ, զգոյշ դիտողին կորովաբար աչերն են որ՝ հասարակ և հարեանցի դիտողաց անշմարելի իրաց կուտան իւրեանց արժանի պատիւը:

Մեզ չըջապատող առարկայից ինամեալ դիտողութիւնն է որ թէ՛ արհեստից և թէ՛ գիտութեանց մէջ ճշմարիտ յաջողութիւն կ'ընծայէ մեզ: Մի ոք արքունի ճանապարհէն կ'անցնի և բան մը չ'ընշմարէր, մինչդեռ ուրիշ մը խոնարհ հիւզի մը մէջ խորազննին դիտողութեամբ առաւել կ'ուսանի քան Օքսֆորտի համալսարանին անուշադիր աշակերան:

Ոչ ապաքէն ներկայ տասնեւիններորդ դարս իւր գիտութեամբ կը պարծենայ, այլ այդ գիտութիւնք ոչ այլ ինչ են բայց եթէ արդիւնք անցեալ դարուց մարդկային ազգին ըրած ուշադիր դիտողութեանց: Բարեբաղդ է նա որ բնութեան մեկնիչն և սիրահայրը եղած է, որով ինքն իսկ խելամուտ կը լինի թէ « բնութիւնն ինքնին է խորհուրդն Աստուծոյ: »

ԵԻԳԻՆԷ Յ. ՊԱԼԳՅԱՆ

ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

Մեծ. Խմբագիր,

Ձեր պատուական « Մալիկ » Շարաթաթերթի անցեալ երեք թիւերուն մէջ, հրատարակուած տեսայ Հայ Աղուդներու ցուցակն:

Կը խնդրուէր, ուր ուրեք եթէ կան Հայ Աղուդներ, որ նոյն ցուցակէն դուրս մնացած են, հրատարակուի յամբողջութիւն նոյն հաւաքածոյի:

Ուրեմն աւելցնելու է հետեւեալն.

ԱՆԱՆԻ. — Աջազուրկ Թադէոս Պատուելի կէզուրեան Սեբաստացի, երգած է Հայերէն և Տաճկերէն բաւական լաւ բանաստեղծական կտորներ:

Արդէն յայտ է մեզ յիշեալ իւր ունեցած այլ և այլ հեղինակութեամբն և թարգմանութիւններովը. ինքն այժմ կը գտնուի 'ի Կ. Պոլիս և կը բնակի 'ի Թաղն Իւսկիւտար:

Ի՞նչ արդեօք պիտի կարեկցի յիշեալ աջազուրկ պատուելի ներկայ նիւթական աննախանձելի վիճակին վրայ. մինչեւ ե՛րբ պիտի լքանեմք այսպիսիներն. — կարծեմ մինչև որ Եկեղեցեաց դուռներն մուրանալու սկսին:

Թ. Կ. Մ.

1892 Սեպտ. 21, Կ. Պոլիս

ԵՐԶԱՆԻԿ ԼԻՆԵԼՈՒ ԱՐՈՒՆՍՏԸ

Օրը երկու ժամ քալէ:

Ամէն գիշեր եօթը ժամ քնացիր:

Արթննալուդ պէս ելիր:

Ելնելուդ պէս աշխատէ:

Անօթի եղած ատենդ միայն կեր և ծանր ծանր:

Մարաւի եղած ատենդ միայն խմէ:

Պէտք եղած ատեն միայն խօսէ, և մոքէդ անցուցածիդ կէսը միայն ըսէ:

Այն բանը միայն գրէ զոր կրնաս ստորագրել:

Ըրէ միայն այն բանը զոր կրնաս ըսել:

Մի մոռնար երբեք թէ ուրիշները պիտի ապաւինին քեզ և թէ դու պէտք չէ աղաւինիս ուրիշներուն:

Դրամը իւր արժէքէն աւելի մի՛ յարգիր. յիշէ թէ լաւ ծառայ մ'է դրամն, և գէշ տէր մը:

Ոչ ատելութեան, ոչ նախանձու խորհրդոց անսա՛:

Քեզմէ վար նայէ, երբեք քեզմէ վեր:

Ուրիշները եղբարցդ տեղ դիր, և ըստ այնմ վարուէ անոնց հետ:

Այն օրը որ բոլոր մարդիկ զիրար պիտի սիրեն, արդարութիւնը երկրիս վրայ տիրելու օրը մօտեցած պիտի լինի: Թարգ. Յ. Թ. Հ.

ԱՇԽԱՐՀԻ ՇՈՒՐՁԸ

Տանիմարքայի բժիշկները. — Մինչև ցարդ, Տանիմարքայի մէջ, հիւանդները երբ բժշկին երթային, մարք (հինգ զր) մը միայն կը վճարէին, իսկ եթէ բժիշկները հիւանդին երթային երկու մարք կ'առնէին: Վերջերս, կառավարութիւնը նոր սակագին մը հրատարակած է, որուն համաձայն բժիշկները այսուհետեւ մէկ մարքէ աւելի բան մը չպիտի առնուն՝ երբ անձամբ երթան հիւանդաց տունը: Բժիշկները հանրագիր մը մատուցանելով՝ վերստին հին սակագնոյն գործադրութիւնը խնդրած են: Աստուած խղճմտանք տայ մեր կարգ մը բժշկաց, որք հիւանդին ոտքը երթալու համար երկու մէճիտիցէով ալ չեն գոհանար:

Աշխարհի բնակիչները. — Մօտերս հրատարակուած ցուցակ մը աշխարհի զանազան մասանց բնակիչներու թիւը կը ներկայացնէ հետեւեալ կերպով.

Եւրոպիոյ մէջ	357,379,000
Ասիոյ »	825,954,000
Աֆրիկէի »	163,953,000
Երկու Ամերիկաներու մէջ	121,713,002
Աւստրալիոյ մէջ	3,230,000
Ովկէանիայի մէջ	7,420,002
Բեւեռներու »	80,400

Այս ցուցակէն կը տեսնուի, աշխարհի ընդհանուր բնակչաց թիւը, որ է՝ 1,479,729,000:

Ձիգալիօ քաղաքը. — Ասկէ իբր 60 տարի առաջ՝ երեք փայտաչէն խրճիթներէ բաղկացեալ գիւղ մ'էր՝ երեք ընտանիքներով: Հիմա, աշխարհի բազմամարդ քաղաքներու եօթներորդը կը կազմէ՝ 1,250,000 բնակիչ ունի և 125ն մինչեւ 20 յարկով տուներ: Օգը առողջարար է: Մեռնողներու թիւը տարին 18 առ հազար հազիւ կը բարձրանայ:

ՁՈՒԱՐՃԱԼԻՔ

Գիւղացի քահանայ մը քարոզ տալով՝ ըսաւ. « Տէրն մեր Յիսուս Քրիստոս հինգ հազար հացով անապատին մէջ հինգ հոգի կ'ըտացուց: »

— Ասկէ դիւրին ի՞նչ կայ, կ'ըսէ գիւղացի մը, ես ալ նոյնը կրնամ ընել:

Տէրաւորը նշմարեց իւր սխալը և ձայն չհանց:

Յաջորդ տարին, աւուր պատշաճիէն օգուտ քաղելով՝ ուզեց իւր սխալը շտուկել: Այս անգամ թիւերն իրենց տեղը դնելով՝ նկարագրեց հինգ նկանակով հինգ հազար հոգիին կ'ըտանալը, և անցեալ տարի զինք ծաղրող գիւղացիին դառնալով,

— Է՛ նայինք, օրհնած, դուռն ալ կըրնաս ընել:

— Այո՛, Տէր հայր, կը պատասխանէ գիւղացին առանց շփոթելու, անցեալ տարուան աւելցուքով: »

Սնապարծ մեծախօսին մէկը կ'ըսէր թէ աշխարհի հինգ մասերը պտտած է և շատ մը հետաքրքրական բաներ տեսած է որոց մէկը ընաւ յիշուած չէ ո՛ր և է գրքի մէջ:

— Այդ սքանչելիքն է, կը յաւելու, կաղամբ մը, այնքան մեծ, այնքան բարձր, որ ամէն մէկ տերեւին տակ յիսուն զինեալ ձիաւոր կրնան զինուորական կարգ կազմել և զինավարժութիւն ընել, առանց մին միւսին դպչելու:

Անկնդիր մը, առանց թերահաւատութեան նշան մ'իսկ ցոյց տալու, պաղ արեամբ յարեց թէ ինքն ալ շատ ուղեւորութիւններ ըրած է և մինչեւ շարունակ քաջածէս. « Հոն զարմանօք տեսայ որ երեք չորս հարիւր գործաւոր կ'աշխատին խալկին մը շինելու, միայն հարիւր յիսուն գործաւոր խալկիին մէջ մտած՝ կ'այեկ կը զարնէին: »

— Այդ ահագին ամանը ի՞նչ պիտի ընեն, կը հարցնէ վերոյիշեալ մեծախօսը:

— Անշուշտ ձեր նկարագրած կաղամբը

պիտի եփեն, կը պատասխանէ իսկոյն երկրորդը:

Երկու վաճառատան պաշտօնեայ կը խօսակցին: Իւրաքանչիւրը կ'աշխատի ցոյց տալ իւր ծառայած վաճառատան գործոց ընդարձակութիւնը:

Մին կ'ըսէ, իւր խօսակցին ապշեցնելու դիտմամբ: Երևակայեցէք թէ տարին յիսուս լիրայի մեջան կ'սպառուի մեր վաճառատան մէջ:

— Յիսուս լիրա՞, կը պատասխանէ միւսը խնդալէն մարեմով, յիսուս լիրայի մեջանն ալ բա՞ն է: Մեր վաճառատան մէջ միայն թղթակցութեանց մէջ կէտադրութեան նշանները չընեմով տարին հարկւր լիրայի խնայողութիւն կ'ըլլայ մեջանի:

ՅԱՆՁՆԱՐԱՐԵԱԼԻ ՎԱՃԱՌԱՌՏՈՒՆՔ

ԹՂԹՈՎԱՃԱՌԱՌՏՈՒՆ ՎՐԱՅՐ և ԸՆԿ. Ղալաթիա, Գոմիսիօն խանի տակ, թիւ 23: ՄԱՍՆԱՃԻԻԼ նոյն թղթավաճառատան, Պահչէ-Գարու, ձէլալ պէյ խանի տակ, թիւ 18:

ՍՏԵՓՈՆ ԶԱՎՈՒՇԵԱՆ. Գործատուն և վաճառատուն տեղական կերպասուց. դիմացկուն ապրանք՝ Եւրոպական ճաշակաւ: Պապը Ալի ճատտէսի, Պարսկական դեսպանատան դիմաց, թիւ 48:

ԱՐԱՄ Կ. ԿԻԻՄԻՇՃԵԱՆ. Հոտաւէտ նիւթերու և խոզանակաց մթերանոց. Կ. Պոլիս, Էսկի Զապթիյէ ճատտէ, Թօմսօն խանի դիմաց, թիւ 7:

ՍՏԵՓՈՆ ՄԱՆԿԵԱՆ. ճոխ վաճառատուն պարզ և չքեղ անձրեւանոցներու ու արեւանոցներու: Ղալաթիա, Քամանտօ Պանքային դիմացը, Գոմիսիօն խանին տակը:

ԱԻԵՏԻՍ ԶԱՐԻՖԵԱՆ, Դեղագործ ի Դուռ-գարու, Սթամբուլի ճատտէսի: Դեղերու թարմութիւն, դեղագործ խըղճամիտ և անխաբիւ պատրաստութիւն, գնոց չափաւորութիւն, առաւելութիւններ որոյմով իւր անթիւ յաճախորդաց վստահութիւնը գրաւած է:

ՊԵՇԻՐԵԱՆ ԵՂԱՐՔ, Մասվաճառի կրկին խանութք ի Կէտիկ-Բաշա և ի Դուռ-գարու: Փողոցներուն տեղը և խանութներուն թիւերը չեմք սահմաններ, որովհետեւ հանրածանօթ եղած են իրենց ուղղամտութեամբը և ապրանաց ընտրութեամբը:

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԵՄԵՆՆԱՐԱՐՈՒԹԵԱՆՅ Համար գաւառներէն դիմել առ Յովնան Գ. Փալագաշեան, Կ. Պոլիս, Պահչէ-Գարու, Թաշ խան, թիւ 51:

Վկայեալ և յանձնարարեալ ուսուցիչ մը պատրաստ է ստանձնել Գերմաներէնի և ֆրանսերէնի մասնաւոր դասեր: Դիմել Եփեմիկ ի խմբագրատունը:

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵՑԱԼԻ, Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց Ժառանգաւորաց վարժարանի հրատարակութեամբ և Պաշտօնական տպագրութեամբ, «ՅՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՆԱԳՐԱՑ Ի ԹՈՒՐԿԻԱ» Հատոր Ա. Կեսարիոյ վիճակ. Տեսար Ա. Յուլիոյ Հայերէն ձեռագրաց Սուրբ Սարգիսի վանուց ի Կեսարիոյ: Կապուց Տրդատ վարդ. Պալեան, Առաջնորդ Հայոց Կեսարիոյ:

Գին 7 դրուշ

Վաճառման կեդրոնատեղին է Վ. Զարգարեան գրատունը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԼԻ

Պետրոս Դուրեանի Տաղք և քատրերգուքիւնք անուն գործոյն կրդ. թերթը: Բաժանորդագրութիւն կ'ընդունուի ի Կ. Պոլիս, Պալէնց և Զարգարեան գրատունները, և ի Երա Վալսի գրատունը: Բաժանորդագրին է 10 դրուշ: Յետ տպագրութեան 20 դրուշ: 20րդ թերթին հրատարակութեան յետոյ բաժանորդագրութիւնը պիտի փակուի:

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Ճարտար նկարիչ մեծարդոյ Պ. Միլլերտիչ Պարսամեանց յաջողած է ամենայն ճշգրտութեամբ նկարել վաղամեծիկ քերթող Պետրոս Դուրեանի մեծագլխի պատկերն, առանց ի կենդանութեան նորա՝ տեսած լինելու վնա, այլ միայն Դուրեանի կրտսեր եղբոր՝ Աբրիպալաս էֆէնտիի՝ դէմքէն օգտուելով և շինած պատկերն հետզհետէ ուղղելով ըստ դիտողութեանց հանգուցելոյն ազգականաց և մերձուոր ծանօթից, այնպէս որ Պ. Պարսամեանց՝ ըստ նոյն ազգականաց և ծանօթից գրաւոր վկայութեանց՝ ի ձեռին ունի այսօր բանատեղծին կենդանատիպ և ճշգրիտ նմանութիւնը ներկայացնող պատկեր մը: Պ. Պարսամեանց «Եփեմիկ ի խմբագրութեան յանձնած է վերոյիշեալ գրաւոր վկայութիւններն: Դուրեանի լուսանկարն ունենալ ցանկացողներուն գոհացում տալու համար, Պ. Պարսամեանց փափագելով իւր գծած սոյն պատկերէն լուսանկարն ևս հանել բազմաթիւ օրինակ, առ այս բաժանորդագրութիւն բացած է, մեծը (քաղիկէ) 5 դրուշ, փոքրը (վիզիթ) 100 փարա: Գաւառներէն փոստի ծախքն ևս պէտք է զրկել:

Բաժանորդագրութիւնը կ'ընդունուի Եփեմիկ խմբագրատան մէջ: ԿՈՒՆ ԲԱՏՐԻՅՈՒՆՈՒՄԷՆ, Բիւնյոյի համար պատրաստուած ի Գալուստ Մետուճեանէ: Գին 8 դրուշ:

ԿՈՒՆ ԲԱՏՐԻՅՈՒՆՈՒՄԷՆ, Բիւնյոյի համար պատրաստուած ի Գալուստ Մետուճեանէ: Գին 8 դրուշ:

ՓՈՒՆՁ ԳԻՏԱԿԱՆ

Գրեց Տօթթօր Կ. Յ. Փաշայեան

Կը ստորագրուի

Մասն Ա. — Քուռ, խըպըլիկ, երազք, մարգարէական կամ բաղդադուշակ երազներ, քնարչութիւն, համակրութիւն և հակակրութիւն:

Մասն Բ. — Սիրոյ գիտական բացատրութիւնը, Գաղղիական ախտի ծագումը, Գերմանիոյ գահաժառանգին հիւանդութիւնը, Թուրքաւորութիւն:

Մասն Գ. — Առողջաբանական յօդուածք սովորութեան, մոսային կարողութեան, մոսաւոր արհեստից և ոգելից ըմպելեաց գործածութեան վրայ:

Գին 5 դրուշ

Վաճառման կեդրոնատեղին է ԾԱՂԻԿ խմբագրատունը:

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՆԳՂԻԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ

Աշխատասիրեաց Յ. Մանգալուցի

Գին 3 դրուշ

Կը ծախուի ԾԱՂԻԿ խմբագրատունը:

ՍԻՄՈՆ ԳՍԲԱՄԱՃԵԱՆ

ՀԱՒԱՔԱԾՈՅ

ԸՆՏԻՐ ԳՐՈՒԱԾՈՑ

Ա. Տաթի, Բ. Տիպ

Սոյն դասագիրք՝ բաց ի նոր և ընտիր աշխարհաբար հատուածներէ՝ կը պարունակէ 16 շարագրութեանց պատկերներ, զանազան կարեւոր ծանօթութիւնք և 90 շարագրութեանց նոր և ընդլայնեալ նիւթեր, ուստի ներկայս կրնամք յանձնարարել թէ՛ իբր ընթերցման և թէ՛ իբր շարագրութեանց դասագիրք, միակն իւր տեսակին մէջ:

Գին 5 դահեկան:

Կեդրոնատեղի՝ Կ. Պոլիս, Հաճօբուլօ խան, թիւ 29:

ՓՈՐՈՐԴԱՏՈՒՆ

ԵՐՈՒԱՆԴ ՓԱՍԳԱՃԵԱՆ

Կ. Պոլիս, Ազադ Զարշի, 402

Փորագրատան մէջ կը փորագրուին մեծ խնամք և փութով ամէն տեսակ կնիք և պատկեր՝ լատինի, փայտի, և մետաղներու վրայ: Կը փորագրուին տըպագրական ամէն տեսակ և ամէն լեզուէ տառերու սրղապատներ: Կը պատրաստուին կալվածք կապագործեր, զինկոյէ տառեր և թուանշաններ, ևն. ևն:

ԱՐՏՈՒՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱՆԱՆ

ՏՊԱԳՐ. ՄԻԶՐԱՆ Յ. ՓԱՓԱԶԱՆ

Կ. Պոլիս, Զիւմալիլի խան, թիւ 14, 19, 21